

№ 2

ՀԱՅԵԱՐԵԿՈՂԻ

№ 2

ՀԱՅՎԱՅԻՆ—ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾՎԱԿԱՆ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ

ԿԱԼԿՈՒԼԱՑԻԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԻՆՍԻՆՈՒՐ
ԹԵՇՆԱՅԻ
Ազգային Գումարական
Համակարգ
ՀԱՅԱՍՏԱՆ

(Համապետր յել ցուցմունիթեր)

657.5

Ա-89

ՀԵՐԵՎԱՆ—1980

№ 2

ՀԱՅԵՆԱՐԿՈՒԹԻՒՆ

№ 2 349
60

ՀԱՅՎԱՅԻՆ - ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

657.5

Ա. - 89

ԱՐԵՍԱԳՈՐԾՎԱԿԱՆ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՑԻ

ԿԱԿՈՒԼԱՑԻԱՑԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОЧТОНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

(Համակարգեր յիշ ցուցմունիքներ)

ՏԵՐԵՎՈՐ 1980

932 41
25 FEB 2013

28/118

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ՏՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 3922
ԳՐԱՌԵԴԿԱՆՎԱՐ 5490 (Բ)
ՏԵՐԱԺ 1000



60568-67

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Հրատարակում ենք „Կալկуляция, номенклатура расходов и снижение цен в промышловой кооперации“ գրքույթի փոփոխված և լրացված 4-րդ հրատարակության հայերեն թարգմանությունը, իբրև անհրաժեշտ ձեռնարկ մեր ցանցի հաշվային և արտադրամականիկան աշխատազների համար, վորի անհրաժեշտութունը հայերեն լեզվով գրալի պահանջ եր գնումը մեր առաջ՝ կալկուլացիայի սկզբունքային և եյական խնդիրները մասսայականացնելու առակետից և վերացնելու այն տարրակարծությունները և տարրեր ձեզի մոտեցումները, վորոնք մինչեւ որս շարունակում են գոյություն ունենալ արհեստագործական կոոպերացիայի սփոսեմում։

Այս գրքույթի գալիք և լրացնելու նախ կարկուլացիայի խնդիրների վերաբերյալ անհրաժեշտ պակասը և յերկրարդ կվերացնի այն շփոթությունը, վար գոյություն ունի կալկուլացիայի սկզբունքային և առական խնդրում և կառեղծի միասնական սփոսեմում։

Այդ իսկ առակետից մեր ցանցի աշխատանքների համար այս գիրքը տալիք է լիակատար պարզ պատճերացում կարկուլացիայի եյություն, նրա բաղկացուցիչ հիմնական տարրերի ստորաբաժնման ու հետեւյալ

կանության՝ ըստ տարբեր արտադրական որևէ կոների, և ըստ նրանց արտադրական պրոցեսների առանձնահատկութունների և զանազանության:

Հիմնականում՝ դրված խնդիրները լուսաբանված են դոյլություն ունեցող պաշտոնական վորոշումների և կառավարական դիրքեկտիվների հետեւողականությամբ, ցույց տալով վոչ միայն այդ մեթոդների կիրառման ձեփերն ընդհանրապես, այլ առավելապես արհեստագործական կոռպերացիայի առանձնահատուկ պայմաններում և հարմարեցրած տարբեր արտադրությունների ձևերին և նրանց ծալվալին ու հարմարություններին:

Գրքույկում առանձնակի տեղ և արդիական ծալվալի և ծալվերի նոմենկատուրայի կասիֆիկացիային (գառակարգության) և նրա մանրամասն վերլուծմանը, սուրաբաժանելով դրանք ըստ ինքնարժեք կազմելու խնդրում նրանց անմիջական և յերկրորդական կամ ուղղակի թե անուղղակի կատարած գերի կամ աղեցության, մանրամասն բացատրելով այդ ծախքերի առաջարար կշիռը՝ ինքնարժեքի ստեղծման ընթացքում, ինչպես բացատրելով, թե բաշխման ինչպիսի սխալներ են նրա պատականարժար, վո՞ր ե ինչպիսի արտադրության համար, ապա ինչ ծախքեր են, վարոնց կրծառման միջոցով հնարավոր ե իջեցնել գործարանային ինքնարժեքը:

Ինքնարժեքի և ընդհանրապես զների իջեցման ու կարգավորման ինքնում վերլուծության են յենթարկված և մյուս կարեոր Փակապրները, ինչպես արտադրության ձևերի ռացիոնարացման, հում նյութերի նրաբառականարժար ձևերով սպառագործելու ինդիքները:

Կոնկրետ ցուցումներ ե արված նույնպես և ծախքերի բարձման սխալմի վերաբերմար. նախ՝ ինչ ծախքեր են, վոր արտադրության և ինքնարժեքի անձիջական

բազկացուցիչ տարրն են կազմում և վորո՞նք՝ վերադիր ցեխային և ընդհանուր գործարանային): Յերկրորդ՝ ի՞նչ մեթոդով բաշխել ծախքերն արտադրության վրա, վո՞ր դեպքում՝ ըստ անմիջական աշխատավարձի և վո՞ր դեպքում ու արտադրությունների համար բաշխել ըստ անմիջական ծախքերի:

Մինչ որս վոչ պակաս բաղմաղանություն և նկատվել նմանապես և վաճառքի գների կալկուլացիայի ինքնարժեքի վրա կատարված հավելումների խորըում, չնորհիվ կալկուլացիայի վերաբերյալ հայերեն լեզվով վորեւ ձեռնարկ չունենալուն, այսինքն՝ ի՞նչ հաջորդականությամբ պետք ե կատարվի հավելումը գործարանային ինքնարժեքից մինչև առեւտրական ինքնարժեքը և վաճառքի գինը:

Դաս գեղեցերում խախտելով այդ հաջորդականության կարգը՝ տարբեր հետեւանքներ են ստացվել, հետեւապես՝ միատեսակ հետեւանքներ ստանալու համար անհամաժողութեալ վեկավարվել միատեսակ սկզբունքներով ու կարդով: Այսպես՝ ինքնարժեքի վրա հավելում և կատարյալում, նախ՝ ընդհանուր առեւտրական ծախքերը ծածցիու համար (վորոնց թվում կոմիսիան տոկոսներ և արհեստագործական հարկը), վորից հետո ստացվում ե առեւտրական ինքնարժեք (коммерческая себестоимость) և կերտիչլալի վրա ավելացնելով դրամագլխի կուտակման տոկոսային հավելումը՝ կստացվի վաճառքի գինը (продажная цена): Մինչեւ որս այս խնդրում լինել են հակասական ըմբռնումներ, վորոնց հետեւանքով առաջ են չեկել աննորոշալ լորեսներ և շատ տեղերում չեւ ապահովված լինել արտելի նորմալ կուտակումը:

Դաս գեղեցերում արհեստագործական հարկի կամ

Ծալիքերի բաշխման ընթացքում միշտ տարրերել ընթացիկ արտադրական ծախքերը, վորոնք վերաբերում են տվյալ արտադրության չըջանին, իսկ այն ծախքերը, վորոնք կատարվում են տվյալ չըջանում, բայց վերաբերում են հետագա արտադրական չըջանին — «բաշխման յենթակա ծախքեր», որինակ՝ վարկերի տոկոսներ, վերանորոգություններ և այլն և, ընդհակառակը՝ այնպիսի ծախքեր, վորոնք կատարվում են վորոշ պերիոդներով, բայց վերաբերում են տվյալ արտադրության չըջանին, ինչպես որինակ՝ չենքի վարձ, առ տոկոս, վորոնք նախքան կալկուլացիա կազմելը, անկախ վճարման ժամանակից, անհրաժեշտ և մոցնել ծախքերի հաշիվը:

Բարդ արտադրության ընթացքում, յերբ արտադրանքը, նախ՝ ստացվում է կիսապատրաստի վիճակում, հետո նորից բաց և թողնվում արտադրության մինչեւ վերջնական պրոցեսի ավարտումը, ընդհանուր գործարանային ծախքերը չեն վերաբերվում, այդ ծախքերը մտցվում են միայն վերջին կալկուլացիայի ժամանակ, յերբ տվյալ երբ, իրենք պատրաստի արտադրություն, մտնում և պահեստ:

Կալկուլացիայի և բրարբերի լրիվ ու ճիշտ հաշվառման տեխնիկային ափառելու կամ կազմել արտիֆինալաններ, տակ արտադրության ճիշտ ցուցանիներ, վորոնք լինեն ոեալ և ավահովեն թե՛ կոնյուկտոր գները և թե՛ արտելի ֆինանսական վիճակը: Այս ինդիքն է դրված ահա արհեստագործական կոսով: Բացի հերթական անելիքների շարքը, այն է՝ վերացնել կալկուլացիայի մինչեւ որս գոյություն ունեցած ձեւերը՝ միասնական արտադրությունների գների, վորա-

տոկոսների հավելումները կատարված են յեղել ինքնարժեքի համեմատվյամբ, նկատի չունենալով այն հանդամանքը, վոր մասնահանումները կատարվում են վոչթե ինքնարժեքից, այլ վաճառքի գնից, ըստ վորի, արտադրությունը տվյալ գետքում լուրջ կորուստներ կարող ե կրել *):

Կալկուլացիայի խնդրում կարեվոր նշանակություն ունի նաև շինչեցումը (ամորտիվացիա), վորի տոկոսների մասին նույնպես մանրամանորեն ցույց է արված այս դրույյալում, ինչպես նաև «Հրահանդ արհեստագործական արտելներին և ընկերություններին» դրբի 105—114 չորդվածներում, վորոնց համաձայն ել պիտի զեկավարվել:

*.) այսպես, որինակ՝ յեթե գործարանային ինքնարժեքը կազմում է 10 ոուրի և պետք է կատարի հավելուամ, յենթագրենք՝ կոմիսիոն 5%, արհ աշարկ՝ 5%, արտելի կուտակման ոռակին 5%, ընդամենը՝ 15%, և վորապես արտելն իր վաճառքի գնից կազմի այնպես, վոր հետագայում վաճառքի գնից (վոչ թե ինքնարժեքից) կոմիսիոն տոկոսներն ու արհեստագործական հարկը վճարելիս արտելը կորուստի առաջ կանգնած չլինի, անհրաժեշտ և վոչ թե 10 ոուրիուն ավելացնել 15%—ը, արմինքն՝ 10 ո. + 1 ո. 50 կ. = 11 ո. 50 կ., այլ 100%—ից = 15% (հավելումը) = 85% = 10 ոուրիուն (ինքնարժեք): Հետեւապես վաճառքի գինը վորոշելու համար կկաղմնարժեք հետեւյալ ֆորմուլան՝

$$\begin{aligned} 85\% &= 10 \text{ ոուր.} \\ 100\% &= 10 \times 100 \\ &= 11 \text{ ո. } 75,5 \text{ կ. (վաճառքի գինը):} \end{aligned}$$

Այժմ, յեթե 11 ո. 76,5 կ. գումարից 15%—ը, — վոր հավասար է 1 ո. 76,5 կ., — հանենք վաճառքի գնից, կմնալիքի ինքնարժեքը, վորով արտելն այլս չի տուի:

կե, նորմաների միատեսակություն ու ստանդարտ լու-
տեղեկու տեսակետից :

Յելակետ ունենալով վերոհիշյալ հիմնական դրու-
թյունը, և կազմ բաժինը ձեռնարկելով զբառութիս հրա-
տարակությունը՝ կարծում ե, վոր գրքույզը ցանցի հաշ-
վային և արտադրատեխնիկական աշխատազների վորակե-
ման գործում յեղած դժվարությունը և պահնաջը մա-
սամբ կարող է լրացնել ու վերացնել կարկուլացիայի
խնդրի վերաբերյալ դոյություն ունեցող թիրություն-
ները :

Սույն աշխատությունը թարգմանել ե Գ. Շեհնազար-
յանը, իսկ հաշվապահական և տեխնիկական բառերի ու
տերմինների թարգմանության, ստուգման և համեմա-
տության գործում աշխատակցել են ընկ. ընկ. Մ. Ղա-
զարյանը և Զ. Աճեմյանը : Գրքույզի վերջում զբած և
զորոշ գործածական և հաշվապահական բառերի ցուցակ՝
զբքույզի ովտագործումը զյուրացնելու նպատակով :

Հայոնարկուողի կազմ - Բաժին

ԱՌԱՋԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Մեր յերկրի տնտեսական քաղաքականության հիմ-
նական հարցը ներկայումս արգյունաբերական ապրանք-
ների դների իջեցման հարցն և Յ.յդ հարցի ճիշա ու ժա-
մանակին լուծելուց և կախված ԽՍՀՄ-ի տնտեսության
հետագա առաջխաղացումը բոլոր բնադրավառներում և
մեր տնտեսական կայունությունը՝ արտաքին չուկայի
վերաբերմաքը, այլ և բանվոր դասակարգի և գյուղա-
ցիության զաղումի (սմիչկա) ամրությունը : Այս հար-
ցի վրա յև, վոր տնտեսական հիմնարկները (արդյու-
նաբերական ու ապրանքատար) մի յուրահատուկ քրն-
կություն են բանում աշխատավորների լայն մասսաների
առաջ : Նայած թե այլ քննությունը հաջողությամբ
թե անհաջողությամբ կվերջանա, կառավարական մար-
մինների կողմից նախորչական ժամկետներին տնտե-
սական առանձին կազմակերպությունների գործունե-
յության գնահատկան պիտի տրվի :

Տնայնաբարեհստափորձակ. կոռուպերացիան ամբողջովին
ապրանքարտադրութ մի սիստեմ և և հենց գրանով ել
տարրերվում և սպառողական կոռուպերացիայից :

Ճենց այս պատճառով ե, վոր տնայնա-արհեստա-
գործական ապրանքների գների իջեցման հարցը լուծե-
լիս, անհրաժեշտություն է զառնում հիմնականորեն
ուսումնասիրել, ստուգել և ուցինալացման յենթար-
կել թե հումուզի մատակարարելու և թե ապրանքներ

արտադրելու պլոցեսները .—վերջիններս պլխավորապես ստորին ողակներում —և թե հետագա ապրանքաշըշանառությունը՝ վողչ սիստեմի յերեք սղակներում :

Յել այստեղից ել, անկասկած, բղխում են վորոշվարություններ հարցի լուծման համար՝ վողչ սիստեմի վերաբերմաբ : Սակայն այդ դժվարությունները վերջին հաշվով կստիպեն արհեստագործական կոռուպցիայի աշխատողներին մշակել իրենց գործունեյթյան ավելի ճշգրիտ, սացիոնալ և պլանային աշխատանքի ձեվեր : Արտադրական ու առեվտրական կալիուլացիայի ինքնիրները, ծախքերի նոմենկլաստուրան ու նրանց նորմայի յինթարկելը (արտադրական, վերադիր և ընդհանուր առեվտրական ծախքեր), —անհրաժեշտ ձեռնարկումներ նրանց իշեցման համար, ապրանքատար ցանցի կարգափորումը, պարզեցումն ու եժանացումը և այլն—այս բոլորն անխուսափելիորեն բղխում են արդյունաբերական ապրանքների գների իշեցման հարցի ընդհանուր դրումից : Համառուսական Արհեստագործական կոռուպցիայի կազմ-բաժինը ձգտելով ոգնության դալ գների իշեցման դժվար գործում արհեստագործական կոռուպցիայի միություններին ու սկզբնական ցանցի աշխատողներին, ներկա գրքույկի մեջ ընդհանուր ցանցումներ և տալիս, թե ի՞նչպես պիտի մոռենալ վերը թված հարցերի լուծմանը :

Կարկառացիան, այսինքն՝ ինքնարժեքի ու վաճառքի արժեքի վորոշումը թե ձեռք բերված (գնալած) ապրանքների և թե սիստեմի արտադրած ապրանքների վերաբերմաբ—ամեն մի արհեստագործական կոռուպցիավով կազմակերպության (թե միության, թե սկզբնա-

կան միավորի) գործունեյության մի անհրաժեշտ ու բաղկացուցիչ մասն է հանդիսանում : Սակայն, ինչպես յերեվում ե տեղերի հաշվետվություններից ու նյութերից, միություններն ու արհեստագործական առանձին կոռուպցիավիճներ՝ կալկուլացիան (գնահատումը) տարրեր յեղանակներով և տարրեր հիմունքներով են կատարում : Բնդվորում չկա ծախքերի բաշխման միատեսակություն, ծախքերի, վորոնք պետք է ըստ առանձին կատեգորիաների ապրանքի գնի մեջ մտնեն : Դրա համար ել արհեստագործական կոռուպցիայի ապրանքների գները վորոշելիս ստացվում է այդ խնդրին վերաբերող նյութերի բազմազանություն, վոր անկարելի յև համեմատել մեկը մյուսի հետ :

Ներկայումս չի կարելի համեմատել իուս միայն այն, թե այս կամ այն կարգի ծախքերն ի՞նչ աղղեցություն են թողնում ապրանքների գների վրա տարրեր կազմակերպություններում, այլ և այն, թե այդ ծախքերն ի՞նչպես են աղղում միհնույն ապրանքի գնի վրա, միևնույն կազմակերպության մեջ տարրեր ժամանակներում : Շատ հաճախ և պատահում, վոր ինքն, արհեստագործական կոռուպցիավ կազմակերպությունը կալկուլացիա կատարելիս չի ունենում համապատասխան նյութ, վորից պարզվեր թե ծախքերից վորն է ամենից շատ աղղում ապրանքի արժեքի վրա, վորպեսդի համապատասխան միջոցներ ձեռնարկվեն հենց այդ ծախքերի կրծատման համար :

Համառուսական Արհեստագործական կոռուպցիա Միության կազմ-բաժինը յինթագրում է, վոր արհեստագործական կոռուպցիայի միություններում և սկզբնական կոռուպցիավիճներում արտադրվող աղ-

բանքների կուկուլացիան պետք և կանոնավորութիւնը իրենց մեթոդներով :

Անհրաժեշտ և փորոշել, թե ծախքերից վո՞րը պետք է մտնի զնված ապրանքների առքի ինքնարժեքի մեջ կամ արտադրած ապրանքների արտադրական ինքնարժեքի մեջ, վո՞ր ծախքերը պետք է մտենեն հավելում տոկոսների մեջ, վո՞րի հիման վրա նշանակում են ապրանքների վաճառքի արժեքը : Անհրաժեշտ և նույնպես վորոշել, թե ի՞նչ կարգով տարբեր գեղքերում կարկուցիայի մեջ պիտի մտցվի այս կամ այն ծախոր և թե ի՞նչ հիմունքներով պետք է հավելում կատարել, վոր թե ընդհանուր առեւտրական ծախքերը ծածկվեն և թե դրամագլխի կուտակում կատարվի :

Միայն կալկուլացիայի գործի ոլլանավորման ուժիատեսակ հիմունքներով կազմակերպելուց և, վոր ըընարավոր և նորմյախ յենթարկել ծախքերն այս կամ այն ապրանքի վերաբերմամբ : Յեվ միայն այս ճանապարհով և, վոր արհեստագործական կոռովրացիան կարող կլինի գների իջնցման դործում անհրաժեշտ նվաճումներ ունենալ :

Համառուսական Արհեստագործական կոռովրացիայի Միությունն արհեստագործական կոռովելատիլ միությունների ու սուրբին ցանցի միավորներին առաջարկում և սույն գրքույիշի մեջ բերված ցուցումները՝ զեկավարության համար : Նրանց կիրառումը հնարավորություն կտա զների իջնցման համար արհեստագործական կոռովերացիայի սիստեմում անհրաժեշտ պայմաններ ստեղծելու :

Համառուսական Արհեստագործական կոռովրացիայի Միության
Կազմ.-Բաժին

ԱՌԱՋԱԲԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Սույն գրքույիշի առաջին հրատարկությունից անցել և ավելի քան յերկու տարի : Այդ ժամանակամիջույնում իշխանական կուտակության առկերպությունը Առևտնաբարի ժողկոմատը հրատարակության տվյալը «Վերապիր ու ընդհանուր առեվտրական ծախքերի միամանական նոմենկլատուրան», վոր պարտադիր և բոլոր մթերող ու առեվտրական կազմակերպությունների համար : Մեր Կազմ.-Բաժինն արհեստագործական կոռովերացիայի ամբողջ սիստեմին առաջարկել և այդ նոմենկլատուրան՝ զեկավարվելու համար ի՞նչ վերաբերում և արտադրական ծախքերի նոմենկլատուրային, զերջինս մշակված և արհեստագործական կոռովերացիայի միությունների հաշվապահների ու վիճակապերների խորհրդակցության կողմից (1928 հունիս և 1929 — մարտ) :

Այս հրատարկության վերջում տրված և հրահանող այն մասին, թե ի՞նչպես պետք է փորոշել շրջանառությունները և ի՞նչ մեթոդով վերջիններիս ծախքերի տոկոսները հանել :

Կազմ բաժինը կրկին հրատարակության տալով այս լրացրած ու նոր խմբագրված ձեռնարկը՝ արհեստագործական կոռովերացիայի ախատողների ուշագրությունը նորից և հրավիրում կանոնավոր կարկուլացիայի կարելոր նշանակության վրա :

Ապրանքների մթերման ու արտագրության արժեքի մեջ մանող առանձին բաղադրիչ՝ մասերի հաշվառմամբ և միայն, այս վերջինների ապրանքների վաճառքի արժեքի վրա ունեցած աղբեցության ուսումնասիրության միջոցով և միայն, վոր հնարավոր և արհեստա-

դործական կոռպերացիայի տնտեսությունը զեկավա-
լիւ, հնարավորին չափ ոսացիոնալացման յենթարկել
այն :

Արտադրության հաշվական կալկուլացիան ցուց
է տալիս, թե արտադրած ապրանքի արժեքի վրա ի՞նչ
ծախքեր են ամենից շատ ազդում և ինչի՝ վրա պետք է
ուշադրություն դարձնել այդ արժեքին իջեցնելու հա-
մար : Միենույն արտադրանքին վելարերյալ դնահատ-
ման տարբեր տվյալներն իրար հետ համեմատելիս, կա-
րելի յէ տեսնել, թե ի՞նչ ծախքերի մեջ նորմայից շե-
ղումներ են կատարվել, իսկ այդ վերապ կարելի յէ ուր-
գել նաև գործի հիմնադրու կողմերն ու բացերը : Վեր-
ջապես՝ լավ գրված կալկուլացիան ցույց ետալիս թե
արդյոք կարելի՝ յէ տվյալ գործն իր ներկա ծախքերով
— արտադրանքի վաճառքի արժեքներով շարունակել, թէ
կարելի և զգում չիմնական վերակազմություն :

Կալկուլացիան արտադրովի աչքերը բաց է տնում :
Ուսկանոն դրված կալկուլացիայով կամ առանց այն,
ոչխառող արտադրողը խարիսափում է իր տնտեսու-
թյան բացերն ու պակասությունները չի տեսնում :

Այս զբքույկը նպատակ ունի արհեստագործական
կոռպերատիվների միություններին ու առանձին միա-
վորներին ուժանդակություն ցույց տալ կալկուլացիայի
գործի կանոնավորման մեջ : Մակայն այս ցուցումները
շատ դեպքերում բավական չեն :

Արհեստագործական կոռպերացիան ունի բազմա-
զան կազմակերպչական ձեվեր, նրա արտադրանք-
ներն ել բազմազան են և, հետեւաբար, այս զբքույկը մի-
այն տալիս է ընդհանուր ցուցումներ՝ առանց մանրա-
մասն կերպով խորանալու արտադրության տարբեր

րնակավառների ու տարբեր ձյուղերի կալկուլացիայի
ձեվերի ու յեղանակների մեջ :

Արհեստագործական կոռպերացիայի կենարոնը նոր
միայն ձևոնարկել է արտագրության տարբեր ձյուղե-
րի կալկուլացիայի ձեվերի մանրամասն մշակման :
Մինչեւ այդ՝ այս զբքույկը կարող է մեր պայմաններում
ուղղուց ծառայել արհեստագործական կոռպերացիա-
յի աշխատավոնների համար :

Այս զբքի հիմքնակն է Համառուսական Արհեստա-
գործական կոռպերացիայի Միության կոնսուլտանտ
վ. վ. Խեժնյանկը :

Հ. Ա. Կ. Մ. ԿԱԶՄ-ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

I. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԿԱԶՄՈՂ ՏԱՐՐԵՐԸ

Բոլոր միությունները, կոստերատիվներն ու արտելները, ինչպես զործարանային տիսի, նույնպես և այն, որը ընդհանուր արհեստանոցներ ունեն կամ արտադրության նյութերը տալիս են անդամներին տանը վերամշակելու համար և կամ զբաղվում են կոմիսիոն մթերման, մատակարարման-վաճառահանման կամ արտադրակ գործարքներով, պետք և կարկառացիա կաղաքներու համար ինքնարժեքն ու վաճառքի պահերը:

ա) Մթերմաների և մատակարարման-վաճառահանման գործարքների համար պետք և վարուշել.

մատակարարման համար դնիած ապրանքների մթերման արժեքը (ինքնարժեքը) և նրանց վաճառքի պինը.

վաճառահանման համար դնիած ապրանքների մթերման արժեքը և նրանց վաճառքի պինը.

աշխատանքի կոմիսիոն յեղանակի կիրառման գեղարքում—կոմիսիոն վարձատրության այն չափը, զոր անձը բաժեն և ծախքերը ծածկելու համար :

1. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԻՆԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԹԵՐՄԱՆ ԱՐԺԵՔԸ ԿԱԶՄՈՂՈՒՄ Ե.

ապրանքը դնելիս
ա) ապրանքի արժեքից, ըստ հայթայթողի հաշվի.

թ) ապրանքը ձեռք բերելու և պահեստը հասցնելու հետ կապված ծախքերի դումարից .

ապրանքի սեփական մթերմանը կատարելիս՝

ա) արտադրության հիմնական մախումներից (հիմնական և սժանողակ նյութերի արժեք կամ հողամասերի և անտառամասերի վարձ), բանվորական ուժի աշխատավարձ).

բ) մթերման վերադիր ծախքերից (այլհայլ ծախքեր արտադրանքի պահեստ հասցնելու հետ կապված ծախքերով միասին).

Մարտակարարման համար գնիած ապրանքների վաճառքի արժեքը կազմվում է՝

ա) ապրանքի մթերման արժեքից.

բ) համելման դումարից (անզուտ (ՅՈՅՈՅՈՒ) ողուտից), զոր կազմվում և ընդհանուր առելքտրական ծախքերից ու զրամագլխի կոտակման (զուտ ողուտից) դումարից :

Ծանոթություն: Թե այսուղ և թե հետապայում ընդհանուր առելքտրական ծախքեր ասելով պետք և հականալ ԽՍՀՄ Առկորդի ժողկոմատի ծախքերի նոմենկապուրայում հեշտած ծախքերը և, բացի այդ, ապրանքների պահպանման ու վաճառքի հետեանքով ունեցած պակասողը, վարկային ծախքերը, և, 1929 թվի սեպտեմբերի 25-ի, կինոգործիութիւնու ժողկոմի վորոշման հիման վրա առնվազ Արհեստագործակոն Հարկը—համայնցված սեկտորի միանվագ Հարկադրման գումարները (հիշյալ որևէոք հրատարակվում է ի փոփոխություն 1928 թվի սպասութիւն 10-ի, վարով վերացվում և մանվածքային արտադրանքի բաժր և այն փոփոխինված և պետական առաջնորդության հարկով):



2. ՎԱՃԱՌԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՆՎԱԾ ԱՅ-
ՐԱՆՔՆԵՐԻ ՄԹԵՐՄԱՆ ԱՐԺԵՔԸ
ԿԱԶՄՎՈՒՄ Ե

- ա) ապրանքների այն արժեքից, վոր վճարվում է հայթայթողներին.
- բ) այն վերադիր ծախքերից, վորոնք կապված են ապրանքների ընդունելու և սպահեստ հասցնելու հետ:

Այն դեպքում, յերբ վաճառահանման համար ընդունվող ապրանքները մինչև վաճառք պետք է չուկա հանելու համար կարգի բերվեն, վերամշակվեն, ապա վերադիր ծախքերին պետք է ավելացնել նաև այդ ծախքերը:

Վաճառահանման համար զեված ապրանքների վաճառքի արժեքը կազմվում է .

- ա) մթերման արժեքից
- բ) հավելման գումարից (անկուտ ՅՈԼՈՅ ողուտ) ընդհանուր առևտրական ծախքերը ծածկելու համար

Գրամագլուխի կուտակման համար (դուռ ողուտ): Վաճառքի գինը վորոշվում է գների ցուցակով (ուրանական գումարի պահեստ : Ապրանքը սեփական պահեստից դնողի պահեստը փոխադրելու ծախքերը վերջինիս հաշվին են դրվում և ավելացվում սեփական պահեստի ֆրանկո գնին : Սակայն յեթե պատահի, վոր ապրանքը սեփական ծախքերով պետք է հասցնել գնորդին, այս ծախքը համարվում է վերադիր ծախք, վոր ավելացնում է ապրանքի ինքնարժեքը: Նըման դեպքերում այս ծախքը հաշվապահության կողմից ձևակերպվում է վաճառքի հաշվի դերետին :

3. ԿՈՄԻՍԻՈՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ, ԸՆԴՈՒԿ-
ՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ

Հաշվառվում են վաճառքի գնով, համաձայն հանձնարարություն ստացողի (կոմիսենա) հետ պայմանա-վորված գնի, ընդ վորում այս գնի մեջ են մտնում .

ա) հանձնարարուղչեքը (կոմիսիոն առկուր), վոր հաշվառմ է ապրանքների վաճառքի արժեքի վերաբեր-մամբ : Այս առկուրը պետք է ծածկի հանձնարարություն ընդունողի ընդհանուր առևտրական ծախքերը և դրա-մագլուխ կուտակելու համար նրան զուտ ոգուտ տա :

բ) ապրանքի պահպանման և վաճառքի հետ կապ-ված ծախքերի գումարը (ապահովագրում և այլն) և

գ) այն գումարը, վոր ստանում է հանձնարարու-թյուն ընդունողը : (կոմիսենար)

4. ԱՊՐԱՆՔՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԶԵՌ-Ք ԵՆ ԲԵՐ-
ՎԱԾ (ՄԹԵՐՎԱԾ ԵՆ) ԿՈՄԻՍԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Ա. Այս ապրանքների արժեքը հանձնարարություն տվյալին ապրանքը հանձնելիս կազմվում է .

- ա) մթերման արժեքից և

բ) այդ արժեքի վրա ավելացրած կոմիսիոն վար-ձատության տոկոսից . վերջինս պետք է՝ ծածկի հանձնարարություն կատարողի (կոմիսիոների) ընդհանուր առևտրական ծախքերը և պամագլուխի կուտակման համար նրան զուտ ո-գուտ տա :

Յ. Արտադրական գործարքների վերաբերմամբ (պատրաստի արտադրանքներ կամ կիսափարբեկատներ արտադրելիս) անհրաժեշտ և վորոշել . 1) արտադրու-

թյան նյութերի մթերման արժեքը (ինքնարժեքը) 25
պատրաստվող ապրանքների (արտադրանք կամ կիսու-
ֆարբիկատ) արտադրական ինքնարժեքը և 3) նույն
ապրանքների վաճառքի գինը:

1. Արտադրության նյութերի մթերման արժեքը
կազմվում է նույն տարերից, ինչ տարերից կազմվում
են գնվող կամ մթերգող այլ ապրանքների մթերման ար-
ժեքը (Տես գերը աշ.) :

2. Ապրանքների (արտադրանքների) արտադրական
արժեքը տարբեր դեպքերում կազմվում է հետեւյալ
տարբերից .

Պարզ արտադրություն (գոր սովորական և փոքր
արտելների համար), արտադրության հիմնական մըս-
տումներից .

ա) հիմնական և ոժանդակ նյութերի մթերման ար-
ժեքից, չհաշված այլ նյութերի արժեք ունեցող մնա-
ցողներն ու ավելցուկները (ՕՏХՈԾ) .

բ) բանվորական ուժի աշխատավարձից .

արտադրության վերադիր ծախքերից .

գ) արտադրական ծախքեր, ներառյալ այլ ապրանք-
ների փոխադրական ծախքերը մինչև պահեստ՝ վաճառ-
քի համար :

Բարդ արտադրություն . Երա առանձին աշխատան-
քի մասերի կամ առանձին ցեխերի հասուկ հաշվառ-
մամբ-ունի տարբեր կազմակերպչական ձեեր :

1. Արտադրություն, վոր բաշխվում է ըստ ժա-
մանակի և ունի առանձին աշխատանքային մասեր, վո-
րոնք փոխարինում են մեկը մյուսին : Որինակ՝ աղյուսի
արտադրություն, վոր բաշխվում է մի քանի առանձին

աշխատանքների ժամանքի, այս կազմի հանույթ և պատ-
րաստում . բ) հում աղյուսի պատրաստում և գ) ա-
ղյուս թթել :

2. Արտադրության բաժանումն ըստ ցեխերի, ընդ
վորում ցեխերից ամեն մեկը կատարում է աշխատանքի
մի ժամանք, լրացնելով մյուս ցեխերից ստացված աշխա-
տանքը . որինակ՝ վոտնամանների արտադրությունը,
վոր յերեք հիմնական ցեխերի մեջ է բաշխված (Ճեղ,
կարող վորուչ տեսակ արտադրանքի՝ յալովի վոտնա-
մանների արտադրության ժամանակ նաև «զագաստով»
չիկներից» ցեխը) :

3. Արտադրության բաժանումն ըստ ցեխերի, ընդ
վորում առանձին ցեխեր աշխատում են միաժամանակ,
պատրաստում են միենույն առարկայի տարբեր մասերը
և մասամբ հանդիսանում են այդ մասերի հավաքող ցե-
խեր (որինակ՝ մեքենաների, բարդ գործիքների, ժա-
մացույցների արտադրությունը)

4. Բացի այդ, հիմնական արտադրության կից կա-
րող են լինել նաև ոժանդակ ու կողմնակի արտադրական
ձեռնարկներ, վորոնք անհրաժեշտ են հիմնական արտա-
դրության սպասարկման համար, վորպիս ոժանդակող :
Այդպիսի ոժանդակ ու կողմնակի արտադրության որի-
նակներ կարող են լինել արտելային գործարանին կից
նորոգող արհեստանոցները, մետաղի արտադրության
կից ատաղձագործական արհեստանոցը և այլն կամ
կաշեգործարանին կից եքստրակտ և քիմիական ներկեր
պատրաստելու ձեռնարկությունը, կոշկեղենի գործա-
րանին կից փայտի կրոնկներ պատրաստող արհեստա-
նոցը :

Այս բոլոր գեղքերում, յերբ արտադրությունը բազկացած և առանձին մասերից, մի ցեխի միջոցավ պատրաստված կիսաֆարբիկասը հետեւյալ ցեխի համար հիմնական նյութ և հանդիսանում:

Արտադրության առանձին ցեխերի բաժանված լինելու գեղքերում արտադրական ծախքերը բաշխվում են յերկու խմբի.

ցեխային ծախքեր կամ ցեխի ուղղակի ծախքեր. ընդհանուր գործարանային ծախքեր կամ ամբողջ արտադրության ընդհանուր ծախքեր:

Հիմնական արտադրության առանձին ցեխերի ծախքերի բաշխման մոտավոր կառուցվածքը հետեւյան և :

1-ին ցեխ. Արտադրության հիմնական մսխումներ,
ա) հիմնական և ոժանդակ նյութերի մթերման արժեքը՝ չհաշված արժեք ունեցող մնացորդներն ու ավելցուկները. (ՕՏԽՈՋ)

բ) բանվորական ուժի աշխատավարձ
արտադրության վերադիր ծախքեր

գ) ցեխային արտադրական ծախքեր :

2-րդ ցեխ. Արտադրության հիմնական մսխումները
ա) 1-ին ցեխի պատրաստած կիսաֆարբիկասների արտադրական արժեք.

բ) լրացուցիչ նյութերի արժեք (չհաշված արժեք ունեցող մնացորդներն ու ավելցուկները).

գ) բանվորական ուժի աշխատավարձ
արտադրության վերադիր ծախքեր

դ) ցեխային արտադրական ծախքեր :

3-րդ ցեխն ու հետեւյալ ցեխերը՝ հաշվառվում են հույն հիմունքներով,

Աժանդակ ու կողմնակի արտադրությունները հաշվառվում են նույն կերպ, ինչպես 1-ին ցեխը :

Ապրանքների արտադրական արժեքը հետեւյալ գումարներից և կազմվում:

ա) առաջին և հետեւյալ ցեխերում մսխումնական արժագնական առանձական և ոժանդակ նյութերի արժեքեր :

բ) այն նյութերի արժեքից, վորոնք լրացուցիչ կերպով գործադրվել են ցեխերում այլ ցեխերի կիսաֆարբիկատների վերաբերյալ ժամանակ :

շ) բոլոր ցեխերի աշխատավարձի գումարներից

զ) բոլոր ցեխերի արտադրական ծախքերի գումարներից

է) ընդհանուր գործարանային ծախքերից :

Այս գեղքում բոլոր թված ծախքերի գումարից սկսած և հանել բոլոր ցեխերում ստացված՝ արժեք ունեցող մնացորդների ու ավելցուկների (ՕՏԽՈՋ) գումարը :

Բարդ արտադրությունների մեջ ցեխերի արտադրանքները գնահատվում են առանձին, ընդ վորում հիմնական արտադրության առանձին մասերի վերաբերմաբյերեմն հաշվառվում են վոչ միայն ցեխերի արտադրական ուղղակի ծախքեր, այլ և համեմատական չափով ընդհանուր գործարանային կամ ընդհանուր արտադրության ծախքերը, վորոշելով վոչ թե կիսաֆարբիկատի արտադրական ցեխային արժեքը, այլ նրա լրիվ արտադրական արժեքը :

3. Անդամներին վերամշակման համար սրվող հույն նյութի կամ կիսաֆարբիկատի արտադրական արժեքը կազմվում է

Պարզ արտադրության մեջ

Արտադրության հիմնական մսխումներից

ա) հիմնական և ոժանդակ նյութերի մթերման ինքնարժեքից (գուրս յեկած արժեք ունեցող մնացորդների և ավելցուկների արժեքը)

բ) աշխատավարձի ոլայմանավորված գումարը (հասավաճառ) :

Բարդ արտադրություն-յերբ անդամների արտադրած կիսաֆարբիկատները, Կոոպերատիվը հետագա վերամշակման և առնում սեփական արտադրության մեջ 1. արտադրական պրոցեսի ընթացքում կամ 2. վորոցես արտադրական պրոցեսի վերջնական շրջան (կամ բառարիա) :

Նման զեղերում ապրանքների արտադրական արժեքը կազմվում է հետեւյալ տարրերից :

ա) անդամների պատրաստած կիսաֆարբիկատների արտադրական արժեքից (աես վերը)

բ) սեփական ձեռնարկում մսխամած նյութերի արժեքից

դ) սեփական ձեռնարկում բանվորական ուժի աշխատավարձի գումարից

*) Կոոպերատիվի հումուլիթը վերամշակելու համար անդամներին, յերբ այդ աշխատանքը կատարում են տանը, աշխատավարձի գործարքային վճարի (շեմանական) մեջ մտնում են նաև արտադրական ծախքերը, քանի վոր վերջիններս կատարում են Կոոպերատիվի անդամները, այլ և ապրանքները Կոոպերատիվի պահեստ հասցնելու ծախքերը:

դ) սեփական ձեռնարկի ցիստային արտադրական ձախքերի գումարից

ե) սեփական ձեռնարկի լնդհանուր արտադրական ձախքերի գումարից կամ այդ մոմենտների հաջորդականությունը կարող է լինել «բ» · «գ» · «դ» · «ե» · և պահանջանելի պարագաներից (օւժեայա) աշխատավարձն ե, վոր արվում և անդամներին՝ կիսաֆարբիկատներից ապրանք պատրաստելու համար :

Այս դեպքում ևս բոլոր այդ մսխումների գումարից հանդում և արժեք ունեցող մնացորդների ու ավելցուկների գումարը :

Արտադրված ապրանքների վաճառքի արժեքը կազմվում է .

ա) արտադրանքի (ապրանքների) արտադրական արժեքից :

բ) առևտրական հավելումից

ընդհանուր առևտրական ծախքերի համար գրամագլուխ կուտակելու համար (սգուտ) .

Վաճառքի դինը վորոշվում է գների ցուցակով (պըրեսկուրանու) ֆրամեկո սեփական պահեստ . ապրանք գնորդի պահեստ հասցնելու ծախքերը ավելացվում և պրեսկուրանու գնին և գրվում ե գնորդի հաշվին : Սակայն, յեթե ապրանքը գնորդին և հասցվում վաճառողի հաշվին, այդ ծախքերը հավասարեցվում են վերապիր ծախքերին, չեն մտնում գնորդի հաշվի մեջ, այլ հաշվապահությամբ ձևակերպվում են «Վաճառքի» հաշվի կերևում՝ այս կերպ ավելացնելով ապրանքի ինքնարժեքը :

4. Պատվիրաղի նյութերից սեփական ձեռնարկում պատրաստված ապրանքի արտադրական արժեքը կազմվում է .

ա) պատվիրողի նյութերից արժեքից (գուրս յեկած արժեք ունեցող մնացորդների և ավելցուկների գումարը)

բ) կոռուպերատիվի լրացուցիչ նյութերի արժեքից (նույնական չհաշված մնացորդների ու ավելցուկների գումարը)

գ) բանվորական ուժի աշխատավարձից

դ) արտադրական ծախքերից՝ ցելսային և ընդհանուր գործարանային.

5. Անդամներին վերամշակման տրված՝ պատվիրողի նյութերից պատրաստված ապրանքների արտադրական արժեքը կազմում է

ա) պատվիրողի նյութերի արժեքից (գուրս յեկած արժեք ունեցող մնացորդների ու ավելցուկների գումարը)

բ) կոռուպերատիվի լրացուցիչ նյութերի արժեքը. (առանց արժեք ունեցող ավելցուկների ու մնացորդների գումարի),

դ) վերամշակման համար արվող գործարքային (սեղմանայ) աշխատավարձի գումարից.

Ուրիշի հում նյութից պատրաստված ապրանքների ամբողջ արժեքը կազմում է

այ) ապրանքի արտադրական արժեքից

բ) ընդհանուր առեվտրական ծախքերի ծածկելու և դրամագլուխի կուտակման համար արվող հավելման տոկոսներից.

պատվիրողից, ըստ ուայմանի, ստանալիք վարձը պետք է հավասար լինի արտադրական արժեքի գումարին՝ հանած վերջնից պատվիրողի նյութերի արժեքը և հավելումը:

11. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԽՂՂԱԿԻ ՄՍԽՈՒՄՆԵՐԸ

Արտադրության ուղղակի և հիմնական մսխումներ են հանդիսանում հիմնական նյութերը կամ հումույնը, այսինքն՝ այն գլխավոր նյութերը, վորոնք վերամշակվելուց գառնում են արտադրանք (ապլանք). ոժանդակ նյութեր կամ նյութեր, վորոնք պետք է գործադրվեն վորողն հիմնական նյութերի լրացում. (Արինակ՝ գերձակի արտադրության մեջ մահուզը հիմնական նյութ է, իսկ ասուառը՝ ոժանդակ). բանվորական ուժի աշխատավարձը, վոր տրվում է հումույթից և նյութից՝ կիսաֆարբիկաներ և պատրաստի ապրանքներ վերամշակելու ընթացքում:

Թե հիմնական և թե ոժանդակ նյութերը պետք է հաշվառվեն հիմնարկի կամ ձեռնարկության մթերման ինքնարժեքով, այսինքն՝ հայթհայթողի գինը, զումարած այն վերադիր ծախքերը, վորոնք կատարված են այդ նյութերի գնման ու ձեռնարկության հացնելու համար :

Բացի այդ կարգի նյութերից, վորոնք արտադրության հիմնական մսխումների թվում են հաշվառվում, արտադրության մեջ ծախսվում են այլ ոժանդակ բընույթ ունեցող նյութեր, վորովիսիք են մեքենաների յուղը և մեքենաներ սրբելու լաթեզենը (Երանե), այլ և վառելիքը: Այս նյութերի ծախքերն արտադրության մեջ հաշվառվում են վորպես վերադիր բնույթ ունեցող ծախքեր և մտնում են արտադրական ծախքերի հոգվածների մեջ. (առև ստորի՝ այդ ծախքերի նոմենկատուրան): Ամեկայն արդպիսի բաշխումը ընդհանուր կանոն չէ: Մի քանի արտադրությանների մեջ վառելիքը

Հանդիսանում ե արտադրության հիմնական մսխում և հաշվառվում ե վորպես ոժանդակ նյութ։ Այդպես և, որինակ, աղյուսի արտադրությունը, վորտեղ վառելիքն աղյուս թրծելու պրոցեսում պետք ե արտադրության հիմնական նյութ հաշվի (նույն ե գարլճոցում ածուխը, վոր գործադրվում ե մետաղների շիկացման համար)։

3. Արտադրության պրոցեսների մեջ անմիջական մասնակցություն ունեցող բանկորական ուժի աշխատավագը :

Հիմնական մսխում ե միայն այն աշխատավարձը, վոր տրվում ե արտադրության մեջ անմիջականորեն մասնակցող բանկորներին։ Վարչական մարմիններին, այլ և արտադրության սպասարկող բանկոր-ծառայողներին տրվող աշխատավարձը, հաշվառվում ե վորպես արտադրական ծախքերն, այնքան վորքան նրանք կազմած են արտադրանքների ոեալիդացիայի յենթարկելու և տնտեսմներին նյութեր մատակարարելու հետ, հաշվառվում են առևտրական ծախքերի հետ, վորպես ընդհանուր առևտրական ծախքեր։ (այս ստորեւ)։

Արտադրության բանկորներին վճարված աշխատավարձը կարող է չհամարվել արտադրական հիմնական մսխում այն բոլոր դեպքերում, յերբ բանկորներին վրճարվում ե արտադրության դադարի (բնդհասում-պրօցտօն) ժամանակի աշխատավարձը։ Այս գեղքում՝ աշխատավարձի այդ գումարը (գաղաքի ժամանակի աշխատավարձը) ապրանքների կալկուլացիայի ժամանակ բաշխվում ե արտադրական ծախքերի հետ միասին և նրա հետ միանման հիմունքներով։

111. ՌԱԽԵՐԵՐԻ ՆՈՄԵՆՎԼԱՏՈՒՐԱ

- Ծախսքերը բաշխվում են հետևյալ խմբերի միջև։
- Վերադիր (ապրանք ձեռք բերելու հետ կազմված)։
 - Արտադրական 3) Ընդհանուր առևտրական վերջինս իր հերթին բաժանվում է ա) ընդհանուր առևտրական ծախքեր, բ) ապրանքների պահպանման ու վաճառքի հետևանքով ստացված պակասորդ և գ) վարկային ծախքեր։

Վերադիր ծախքերը գումարած հայթայթողի ապրանքի արժեքի գնի հետ՝ կազմում են գնած (կամ ձեռք բերած) ապրանքի պատրաստման (մթերման) արժեքը։

Արտադրական ծախքերը գումարած վորպես վերադիր, արտադրության հիմնական մսխումներին (հիմնական և ոժանդակ նյութերի արժեքին և բանկորական ուժի աշխատավարձին), կազմում են նրանց հետ միասին արտադրանքների (ապրանքների) արտադրական արժեքը։

Ընդհանուր առևտրական ծախքերը, վոր գուրած են զրվում վորպես վնաս, ծածկվում են ապրանքի մթերման ու արտադրական արժեքի վրա տոկոսային վորոշ հավելում անելով։ Այս հավելումը կատարվում է ապրանքի վաճառության ժամանակի։

Ա. ՎԵՐԱԴԻՐԻ ԾԱԽՔԵՐ

Վերադիր են կոչվում այն ծախքերը, վորոնք անմիջականորեն կապ ունեն ապրանքներ գնելու, նրանց մթերելու և պահեստ հանցնելու հետ։ Վորտեղից և այդ ապրանքները վաճառքի յեն հանդում։

ԽՍՀՄ Առեվարի Ժողկոմատի 25 սեպտեմբերի
1928թվի վորոշման կցված նոմենկլասուրայի վերա-
դեր ծախքերը հաշվառման են յենթարկվում հետեւայլ
հոդվածներում:

1. ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Ծախքերի այս խմբի մեջ են մտնում յերկաթուղա-
յին ու ջրային փոխադրական ծախքերը, փոխադրական
ընկերությունների միջոցով կատարվող փոխադրական
ծախքերը, այլ փոխադրումների ժամանակ ապրանքա-
ներ բարձելու ու թափելու հետ կազմած ծախքերը,
այլ և փոստային ծախքերը:

Բացի փոխադրավարձեց, այս խմբի մեջ մտնում են
նաև այն բոլոր ծախքերը, վորոնք փոխադրական ընկե-
րությունները մացնում են իրենց փաստաթղթերի մեջ,
ու լինուիս մագնուերի կանոնուրդ (Ա Ր Օ Ը Տ Օ Ւ)՝
ծախքերը (յեթէ այլ ծախքը մեզայսը անհատի կամ
կազմակերպության հաշվին չե գրվում), յերկաթու-
ղային ու ծովային փոխադրությունների ժամանակ
կողմնակի անձանց և հիմնարկությունների վճարված
ծախքերը նույն այլ ապրանքները վագոն բարձելու,
վագոններից թափելու կըսելու և այլ ծառայությունների համար:

2. ԽՃՈՒՊԱՅԻՆ ՅԵՎ ԱՅԼ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Սայլերով, Փուրպուններով, ավտոներով ապրանք-
ներ փոխադրելու համար կատարվող ծախքերը, վոր
վճարվում են կողմնակի անձանց և հիմնարկությունների
և կամ յեթէ այլ փոխադրական միջոցները սեփական

են, առկայն ողբագործվում են տնտեսավարակոն հի-
մունքներով: (չօքայտապայի расчет)

Եռեյնպես և այլ վոխագումների ժամանակ բար-
ձելու, թափելու, կըսելու համար կատարվող ծախ-
քերը, վորպիսիք վճարվում են կողմնակի անձանց և
հիմնարկությունների: Այլ և վերջիններիս տարայից ողտպելու
հետ կազմած ծախքերը:

3. ԶՈԿՈՒՄ ՅԵՎ ՓԱԹԹԱՅՑՈՒՄ

Ապրանքների մաքրման, տեսակների լամանելու,
չորացնելու և այլ գործողությունների հետ կազմած
այն ծախքերը, վոր կատարվում են ապրանքի փոխա-
դրության ընթացքում մինչև վաճառքի տեղը: (Ապ-
րանքների վերամշակման բարդ գործարքներն առանձ-
նացվում են հատուկ արտադրական հաշվակների մեջ:

Այս ծախքերի մեջ են մտնում. կողմնակի անձանց
ու հիմնարկությունների ծառայությունների վարձատրումը. այլ
և հատուկ շատաների պահպանման ծախքերը. բացի այլ
ապրանքների չոկմտն, փաթթոցման ու փաթթոցա-
կանների (տարայի) ծախքերը և այլ բոլոր աշխա-
տանքների հետ կազմած պակասորդները, փոշիացում
և այլն.

4. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ (сборные пошлины)

Այս խմբի մեջ են մտնում մաքսային, յիշենպիսայի
վերաբերող ծախքերը, բաժը (ակցիզ) (յեթէ առե-
տրական կազմակերպության վրա յե գրած դրա վր-
ձարումը), բորսայի ծախքեր (ապրանքի զնման ժամա-
նակ), դրանցման ծախքերը (նույնպես) և այլն հարկեր
ու հատկացումներ. (նույնպես)

5. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՐՍՈՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՆՉԱՐԱՐՈՂ ԶԵԲԸ (ԿՐՄԻՄԻՌՈՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ)

5. Ապրանքների գնման ու պատրաստման համար կողմնակի անձնոց և հիմնարկների միջնորդական ծառայությունների համար տակոսային վճարումները:

6. ԱՅԼ ՎԵՐԱԴԻԲ ԾԱԽԵՔԵՐ

Եախքեր, վոր կապված են ապրանքի մասնագիտական ընդունման հետ (եքսպերտիզմ), ճանապարհին ապրանքի վերահսկողություն, ուղեկցում փոխազրության ժամանակ և այլ ծախքեր.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԴԻԲ ԾԱԽԵՔԵՐԻ ՆՈՄԵՆԿԱՏՐՈՒՑԻՒՆ

1. Ապրանքների պակասորդը ճանապարհին, վարուաշանում և բնական կորուստների հետեւանելով (չուրացում, փոշիացում, թափում և այլն) վերադիր ծախքերի մեջ չի մտնում. սակայն նրա գումարը մտնում է ընդունված ապրանքի ինքնարժեքի մեջ (և զնահատվում է մյուս մսխումների ծախքերի հետ միասին): Յեթե որինակ՝ գնված և 10 տոնն (10 հազար կիլորամ) ապրանք՝ կիլոգրամը 2 ո., բնդ վարում ճանապարհի պակասորդը կազմում է 0,2 % կամ 20 կիլոգրամ, ապա վասարեն սահացված 9·980 կիլոգրամ ապրանքը գնահատվում է յենելով հետվլյալից.

$$(9\cdot980 \times 2 \text{ ո.}) + 40 \text{ ո.} + \text{վերագիր ծախքերը}$$

2. Մշտական անձնահաղմի պահպանման ծախքերը, (յեթե այդ անձնահաղմը կատարում է ապրանքին գործարքներ, գնում է ապրանքին գործուղման . . . ձա-

հապարհածախքեր և կատարում է այլն) — վերագիր ծախքերի մեջ չեն մտնում, այլ պետք է հաշվառվեն վորպես առելարտկան ծախքեր.

3. Եռոյն ծախքերը հումույթի ու նյութերի գնման համար, վոր ձեռք են լիրվում արտադրական նպատակով, այլ և զբանց պահեստային ծախքերը պետք է համարվեն արագութական ծախքեր (նրանց ընդհանուր դորձարանային մասը) և մտնեն արտադրանքերի (ապրանքների) արտադրական արժեքի մեջ:

4. Յեթե արտադրության համար ձեռք լիրված հումույթի ու նյութերի պահեստառում վերջնաներիս վրա կատարվում է վորոշ աշխատանք, նոխ քանի նրանց արարտադրության արվելը, (որինակ՝ մաքրում, տեսակավորում, բուրդ զգել և այլն), ապա նման աշխատանքների արժեքը պետք է ավելացնել այլ հումույթի ու նյութերին մթերման գնին և այլ ավելացած գնով նրանք պետք է հանձնվեն արտադրությանը: Սակայն յերեւմն նման պրացեսները (յերբ նրանք բարդ ու տեսական բնույթ անին) ավելի նպաստակահարմար են հաշվառել վորոշի արտադրության սկզբնական ընթան, վրագես արարտության առաջին ցեխի պրոցես:

5. Հիմնական արտադրության կից կարող է լինել արտադրության հումույթի ու նյութերի մթերում: Որինակ, զամբյուղների արտադրության ժամանակ ճիպուների պատրաստում, կաշվի արտադրության կից եքարականների մշակում, գոտնամանների արտադրության կից — փայտի կրտնկների արտադրություն և այլն: Մթերումն ու արտադրական նման պրացեսները պետք են հաշվառվեն վորպես ինքնուրույն արտադրություններ, վորոնց մեջ կալկուլացիան ևս կատարվում է առանձին:

արտադրանքների ինքնարժեքի վորոշման համար, բնզ
վորում այդ ինքնարժեքի մեջ Հաշվառվում են սովորա-
րար միայն ցեխային ուղղակի ծախքերը առանց ընդ-
հանուր գործարանային ծախքերի Հավելման, սակայն
ավելի հեշտ կլիներ Հաշվառել նրանց արտադրական ար-
ժեքը գործարանային ընդհանուր ծախքերի հետ միա-
սին:

Բ. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Արտադրական ծախքեր են կոչվում այն ծախքերը,
վորոնք անմիջականորեն կասպած են արտադրության
հետ և արտադրության հիմնական մստումների (հու-
մույթի, ոժանդակ նյութերի արժեքի և բանուժի աշխա-
տավարձի) վերաբերմամբ վերադիր ծախքեր են հան-
դիսանում:

Համառուսական Արհեստագործական կոոպերացի-
այի Միության կեց 1928 թվի հունիսին և 1929 թ. մար-
տի կայացած Հաշվառաների ու վիճակագիրների խոր-
հրդակցության կողմից ընդունված նոմենկլատուրայի
արտադրական ծախքերի, վորոնք ապրանքների ու կի-
սաֆարիկատների արտադրական արժեքի կալկուլա-
ցիայի մեջ են մտնում, մանրամասնությունները հե-
տեւյալն ե.

1. Արտադրության մեջ աշխատող վարչության ան-
դամի աշխատավարձը, այլ և ձեռնարկության արտա-
դրական, տեխնիկական ու գրասենյակային անձնակազ-
մի աշխատավարձը (գործարանի կամ արհեստանոցի,
նրա գրասենյակի, նյութեղենի պահեստի կառավարչու-
թյուն).

2. Արտադրական ձեռնարկության ոժանդակ բան-
վորերի (պահապանների, Հավաքարարների, նորոգ-

ման վրա աշխատող բանվորների և այլն) աշխատավար-
ձը:

1. և 2. Հատվածների ծախքերի մեջ մտնում են բո-
լոր այն տեսակները, վորոնք մտնում են ուղղակի աշ-
խատավարձի մեջ. գրանք են. վորոշ ժամանակի համար
ոսճիկը, նագրուգկան, մասնագիտական ոսճիկը, գոր-
ծարքային վճարը, արտաժոմյա աշխատավարձը, պար-
գևատրումը, բանվոր ծառայողներին արվող տոկոսային
վարձատրությունը, ստնառու մայրերին ընդմիջումների
համար տրվող վճարը:

3. Աշխատավարձի բոլոր տեսակի լրացուցիչ ծախ-
քերը՝ ուղղակի և այլն.

Արձակուրդների փոխառուցում, բնակարան կամ
բնակարանային վճար, բնակարանների լուսավորու-
թյուն և վառելիք, ձեռնարկության դադարի ժամա-
նակ «պլոտովների» վճարումը, հեռացման դեպքում
արվող լուծարքային նպաստը, մասնագիտական հա-
զուածի և սննդի ծախքերը, աշխատանքի վայրը գնալ-
վալու վճարը, պարզեատրում յերկարաժյան աշխա-
տանքի համար :

4. Աշխատավարձի վրա դրվող այլ բոլոր տեսակի
հատկացնվելիք:

Սոցիալական ապահովագրում, փոխադրամ ոպ-
նության գրամարկի մուծումներ, աշխատանակու-
թյան կորցնելու գեպքերում արվող լրացուցիչ նորասու-
րանվոր ծառայողների անդիմի կամ գործարկոմի
պահպանման ծախքեր, բնակարանային Ժնարարու-
թյան հատկացներ :

5. Արտադրության գործերով գարծուդութիւն և
հանապարհածախ:

6. Արտադրության գործերի համար կատարվող գրասենյակային ու փաստ հեռագրական ծախքեր .

7. Արտադրական ձեռնարկության շենքի պահպանումը (նույնական և արտադրության հումուրի ու պահետների) .

Կապալավարձ, բուսավորություն և վառելիք, էնջի ու բակեցի մաքուր պահելու ծախքեր, ընթացիկ նորոգում, ջրի վճար, կոյուղի, հարկեր շենքերից և այլն :

8. Մեքենաների ու սարքավորման պահպանություն

Կապալավարձ մեքենաների յուղեր, լաթեզեն, ընթացիկ նորոգում և այլն .

9. Շարժիչ ուժի պահպանում և արտադրության համար գործադրվող վառելիքի ծախք . ելեկտրականության համար վճար :

Կապալավարձ մեքենաների յուղեր, լաթեզեն, վառելիք, ընթացիկ նորոգում, ելեկտրականության վճար և այլն

10. Ռժանդակ նյութեր և մանր գույք

Ամորտիֆացիայի չենթարկվող գույքի և գործիքների արժեքը, վորոնք դուրս են զբում նյութերի պահեստներից և սպասարձվում են մի տարուց պակաս ժամկետում, բացի մասնագիտական ու արտադրական հագուստեղենից, վորոնք տշխատավարձի վերաբերող լրացուցիչ ծախքերի թվումն են,

11. Գույքի շիշեցում (ամորտիվացիա) և ապահովում

Արտադրական շենքերի չարժիչ ուժերի, մեքենաների ու արտադրության այլ սարքավորման ամորտի-

գացիայի ու աղահովագրման ծախքերը, այլև արտադրության հակահրդեհային ձեռնարկումների հետ կապված ծախքերը :

12. Արտադրության մեջ աշխատողների համար կուտաք-կրթական ձեռնարկումների հետ կապված ծախքեր .

13. Արտադրության համար ստացվող վարկերի ծախքեր .

14. Հարկեր և տուրքեր :

Հողի կապալավարձ, գնհատման տուրք, անձնական արժեստագործական հարկ, տեղական տուրքեր .

15. Այլ արտադրական ծախքեր :

Արտադրության համար լաբորատորիաների, տեխնիկական բյուրոների փորձագետների որինակներ և մողելների, նախագծերի պահպանման ծախքեր . արտագրական խորհրդակցությունների համար ծախքեր, հեռախոսներ, սիդնալիզացիա, յերաշխավորյալ տպահովագրում, կատարելագործումների ու դյուտարարության համար կատարվող ծախքեր :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՔԵՐԻ
ՆՄՄԵՆԿԱՍՈՒՐԱՅԻՆ

Յերբ անհրաժեշտ և լուծել այն հարցը, թե ծախքերից վո՞րը պետք է արտադրական ծախքեր համարվի, (ծախքեր վորոնք մտնում են ապրանքների արտադրական արժեքի կալկուլացիայի մեջ) և վո՞րը պետք է համարվի ընդհանուր (ընդհանուր առևտրական) ծախք, (վոր արտադրված ապրանքների ինքնարժեքի վրա կառարվող հավելումների միջոցով պետք է ծածկվի

այդ ապրանքները վաճառելիս) — անհրաժեշտ ե պարզել ծախքերի բնույթն ու նպատակը:

Այս դեպքում այն ծախքերը, վորոնք կատարվել են արտադրական նպատակներով, պետք ե արտադրական ծախքերի խմբի մեջ հաշվառվեն, իսկ այն ծախքերը, վորոնք կատարվել են արագագուշած ապրանքների վաճառքի (ուղարկացիայի) նպատակով, — առևտրական և վարչակառավարչական ծախքեր-պետք ե հաշվառվեն բնդհանուր առևտրական ծախքերի խմբի մեջ:

Այսպիսով.

Վարչության, ընդհանուր հաշվապահության, քարտուղարության ծախքերն ընդհանուր առևտրական ծախքեր են: Սակայն յերբ Վարչության անդամն զբաղված է բացառապես կամ համարյա բացառապես արտադրության մեջ, նրա սոհնիկը պետք է հաշվառվի արտադրական ծախքերի մեջ: Նույն կերպ պետք է վարպետ նաև այն գեղքերում յերբ հաշվապահը, զրասենյակային ծառայողը և այն սպասարկում են բացառապես կամ գլխավորապես արտադրությանը:

Արտադրության շենքը, շենի պահպանման ծախքը արտադրական ծախքեր են: Վարչության շենքը, նրա պահպանումը, ամորտիզացիան, աղահովագրումը՝ ընդհանուր առևտրական ծախքեր են, նույնպիսի ծախքեր են այն պահպանների ծախքերը, վորաեղ վաճառքի պատրաստի ապրանքներ են պահպան: Սակայն արտադրության նյութերի պահպանների պահպան: ամորտիզացիայի աղահովագրության և այլ ծախքեր արտադրական ծախքեր են: Եթե վարչության շենքը միաժամանակ ապրանքների վաճառքի վայր է, կոռպետատիվի դրասենյակն ու արհեստանոցը միևնույն տեղն

են գտնվում և նրանցից առաջինը բոհում և փոքր տարածություն արհեստանոցի մեջ, տպա վարչության շենքի ծախքերը կարելի յէ չջոկել արտադրական ծախքերից, այլ պետք ե թողնել նրանց մեջ: Նույնը՝ այդ շենքի համար վճարվող հարկերի և տուրքերի համար:

Արտադրական նյութերի բնական պակասորդը համարվում է արտադրական ծախք: Նույնպիսի պակասորդն այն ապրանքներից կամ նյութերից, վորոնք բաց են թողնվում անդամներին, այլ և վաճառքի պահեստների պակասորդը համարվում են ընդհանուր առևտրական ծախքեր:

Հարկերն ու տարբերը կարող են ծախքերի յերեք խմբերին ել վերաբերել, հայած թե ի՞նչ գործարքների յեն նրանք վերաբերում: Շրջանառություններից առնվող հավասարեցուցիչ տուրքն առևտրական ընդհանուր ծախքերին և վերաբերում: Յեկամատային հարկը սովորաբար գուրս և զրվում ողուտների գումարից մինչև նրա բաշխումը և ծախքերի մեջ չի մտցվում:

Վառելիքի համար կատարվող ծախքերը, վորոնք արտադրության շենքերին են վերաբերում, արտադրական ծախքերի խմբին են պատկանում: Նույնը՝ շարժիչների, ելեկտրական կայանների և այլ արտադրական նպատակներով գործադրվող վառելիքի ծախքերը: Սակայն մի շարք արտադրությունների մեջ (որինակ՝ աղյուսի արտադրության մեջ կամ գարնոցի արտադրական աշխատանքների մեջ) այդ ծախքերը, ինչպես վերեւումն ել ենք ասել, ավելի ճիշտ կլինի հաշվել արտադրական ծախքերի խմբի մեջ ոժանդակ նյութերի հետ հավասար հիմունքներով: Վարչության շենքերի առքացման համար գործադրվող վառելիքն ընդհանուր

առեւտրական ծախքերի խմբին և վերաբերում, բայց
այն դեպքերից, յերբ վարչության շենքի ծախքերն
արտադրության շենքերի ծախքերից չեն առանձնաց-
գում (Տես վերը) :

2. Փոքր արտադրական արտելների մեջ արտադրա-
կան ծախքերը չեն բաժանվում ցեխային և ընդհանուր
գործարաններին ծախքերի: Այդպիսի բաժանումը հար-
մար և կատել մեծ արտադրական ձեռնարկության-
ների մեջ, վորոնք գործարանի բնույթ ունեն և վորոնց
աշխատանքը բաշխվում է մի քանի շրջանների կամ
ցեխերի վրա:

Յեխային ծախքեր են կոչվում այն արտադրա-
կան ծախքերը, վորոնք վերաբերելով միայն տվյալ ցե-
խին՝ վերջինիս ուղղակի ծախքեր են հանդիսանում:

Ընդհանուր գործարաններին արտադրական ծախ-
քեր են կոչվում այն ծախքերը, վորոնք վերաբերում են
ամբողջ արտադրական ձեռնարկությանը և վորոնք
կալկուլացիայի ժամանակ բաշխվում են այս կամ այն
տոկոսի չափով:

Թե վերը բերված արտադրական ծախքերից վո-
րոնք են ցեխային և վորոնք են ընդհանուր գործարա-
նային ծախքեր—այս հարցը վճռվում է տարբեր կեր-
պով տարբեր ձեռնարկներում և վերջիններիս տարբեր
կազմակերպման պայմաններում:

Կան այնպիսի ծախքեր, վորոնք միշտ ել ընդհա-
նուր գործարաններին բնույթ ունեն: Այդպես են՝ ար-
տադրության զեկավար վարչության անդամի ոռջիկը,
արտադրության հաշվապահի, գործարանների կից գրա-
սենյակի ծախքերը, արտադրության կից պահեստի
ծախքերը, հարկեր և տուրք և այլն:

Սակայն չառ ուրիշ ծախքեր մի ձեռնարկության
մեջ հանդիսանում են ընդհանուր գործարանային ծախ-
քեր, վորովհետեւ չեն կարող առանձին ցեխերի վրա
բաշխվել կամ թե այս կամ այն տոկոսով դրվում են
ցեխերի վրա կամ դրվում են վերջին ցեխի վրա՝ ապ-
րանքի արտադրական արժեքի կալկուլացիայի ժամա-
նակ.

Յերրենց ել, նայած կոնկրետ գեղքին, միենայն
ծախքը կարող և համարվել կամ ցեխային ծախք կամ
ընդհանուր գործարանային: Որինակ՝ ցեխի աշխատան-
քի գաղարի (պրոստոյի) աշխատավարձը, յերբ գաղարն
առաջացել և ավյալ ցեխի մեքենայի կոտրիելուց-ուղ-
ղակի ցեխային ծախք և նույնպիսի գաղարի հետ կապ-
ված ծախքը, յերբ գաղարն առաջացել և ընդհանուր
պայմաններից (որինակ՝ հում՝ նյութերի պակասու-
թյունից կամ արտադրական շենքի ընդհանուր նորոգ-
ման հետեւանքով)՝ ընդհանուր գործարանային ծախք և :

3. Այս կամ այն արտադրանքի կալկուլացիայի ժա-
մանակ պետք է առանձնացնել այն ծախքերը, վորոնք
նշանակություն ունին առանձին ապրանքների կամ նը-
րանց առանձին խմբերի արժեքը վորոշելու համար: Վե-
րաբերեած բերված նոմենկլատուրայի ծախքերի խմբավո-
րումը նման դեպքերում պետք և համապատասխան կեր-
պով բաշխվի առանձին ծախքերը վորոշելու համար:

4. Հիմնական արտադրության առանձին մասերը
կամ ամբողջ արտադրության սպասարկող ոժանդակ
արտադրական ձեռնարկությունները, որինակ՝ ելեկ-
տրական կայան (վորը սպասարկում և գործարանը)
կամ նորոգման արհեստանոցը, կալկուլացիայի յեն յեն-
թարկում առանձին՝ նրանց կատարած աշխատանքի ար-

ժեքը վորոշելու համար, լնդ վորում այդ արժեքը բաշխվում է արտադրության տարբեր ցեխերի կամ ձեռնարկության առանձին մասերի վրա և վերջիններին արտադրական ծախքիրի մեջ է մտնում: Ոժանդակ ձեռնարկությունների կալկուլացիայի ժամանակ, յերբ վորոշվում և բաշխվում են առանձին ցեխերի ծախքերը, հաշվառվում են տվյալ ձեռնարկության բոլոր ծախքերը, վերոնց թվում նաև այդ ձեռնարկությունն սպառարկող ծառայողների սկահպանման ծախքերը: Նույն հիմունքներով են բաշխվում նաև փոխադրական միջոցների (трансфер) ծախքերը, յեթև նրանց հաշվառվումը տարբեր և անտեսավարական հիմունքներով և կալկուլացիայի յի յէնթարկվում նրա ծառայությունների արժեքը:

5. Կալկուլացիայի յենթարկվող այս կամ այն խումբ ապրանքների արտադրական ծախքերը բաշխելիս՝ առանձին ցեխերի կամ առանձի խումբ ապրանքների մեջ պետք է ուշադրության առնել այն ժամանակը, վորին վերաբերող ապրանքների կալկուլացիան և կատարվում: Այդ անհրաժեշտ և վոր հաշվառվեն միայն այն ծախքերը, վորոնք այդ ժամանակի ընթացքումն են կատարվել, որինակ՝ յերբ տվյալ ամսին ծախքեր են կատարված (ապահովագրական, կապալավարձ, արտադրական հազուստ, նորոգում և այլն) մի տարու համար, պահա արտադրական կալկուլացիայի ժամանակի պետք և հաշվի առնել յուրաքանչյուր ամսիս այդ ծախքերի 1/12-րդ մասը: (կամ 1/6, 1/4 և 1/2-ը համապատասխան ժամանակաշրջաններին վերաբերող ծախքերի համար):

6. Յեթե նախահաշվով վորոշված վորեկ ծախքարվա ընթացքում անհամար կերպով է ծախսվելու (որինակ՝ ամառվա արձակուրդավորներին վճարումը) ապա տարվա սկզբին նախահաշվային այդ գումարը պետք բեղերվների հաշվին գրել («Հետաղա արտադրական ծախքերի»-ղերեսին և «բեղերվների»...կրեդիտին), ապա ամեն ամսիս կատարվող ծախքերը պետք է գումար գրվեն («Հետաղա արտադրական ծախքերից» «արտադրությունը՝ կալկուլացիայի յենթարկելիս»—հաշվին) նախահաշվի գումարի 1/12-րդ մասով: Նման ծախքերի փաստական կատարումը ձեւակերպվում է «բեղերվներ»-ի ղերեսին, «դրամարկղի» կրեդիտին գրանցելով վճարվող գումարները:

7. Գույքի ամորտիֆացիայի ծախքերը կալկուլացիայի ժամանակ հաշվի յեն առնվում ամորտիֆացիայի տարեկան գումարի համապատասխան մասովը: Որինակ՝ արտադրության ամբողջ տարին գործելիս-ամորտիֆացիան ամսիս-ամսիս հաշվում է տարեկան գումարի 1/12-րդ մասով և այլն:

8. Արտադրության այն ծախքերը, վոր կատարվում են արտադրության դադարի ժամանակի համար (պրոստոյ) պետք և բաժանվեն այն ապրանքների վրա վորոնք արտադրվելու յեն տարվա մնացած ժամանակ:

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Ընդհանուր առևտրական ծախքեր են կոչվում այն ծախքերը, վորոնք կատարվում են անդամների մատակարարման կամ ապրանքների բեյալիզացիայի համար, այսինքն՝ միության կամ կոռպերատիվի առևտրական ծախքերը, նրանց կառավարչական ընդհանուր ծախ-

քերը, գուրս յեկած հատկապնա արտադրության վերաբերող ծախքելը:

Համաձայն 1928 թվի սեպտեմբերի 25-ին Առեվորի Ժողկոմատի հաստատած նոմենկլատուրայի, ընդհանուր առևտարական ծախքերի մեջ մտնում են հետեւալ հոգվածները:

1. Աշխատավարձ ա) վարչության, վերասուգիչ հանձնաժողովի և խորհրդի բ) վարձու բանվորների ու ծառայողների.

Հիմնական աշխատավարձ, արտաժամյա, գործարքային, պրեմիալ վարձատրություն և այլն.

2. Աշխատավարձին վերաբերող լրացոցիչ ծախքի ա) վարչության, վերասուգիչ հանձնաժողովի և խորհրդի բ) վարձու բանվորների ու ծառայողների.

Չողագործված արձակուրդի փոխհաստուցում, հեռացման ժամանակ տրվող լուծարքային ծառայության հրավիրելու և փոխադրական ծախքեր (տեղափոխության ծախքեր, որապահիկ ճանապարհածախք), ճանապարհածախք ծառայության գնալ գալու համար (տրամվայի տուն, մերձքաղաքային հաղորդակցության հետ կապված ծախքեր), մասնագիտական և արտադրական հաղուստեղին, ընակարան և նմանորինոկ վոչ դրամական ծախքեր: (Ա Տ Գ Ր Օ Ռ).

3. Աշխատավարձի վրա հաշված ծախքի.

ա) վարչության, վերասուգիչ հանձնաժողովի և խորհրդի.

բ) վարձու բանվորների ու ծառայողների.

Սոցիալական ապահովագրում, մուծումներ փոխարձ ողնության դրամարկղը, կուեկտիվ պարմանաշը հիման վրա պահպող՝ տեղիո՞մի կամ այլ հիմնար-

կությունների պահպանման ծախքեր, հատկացումներ ընակարանային շինարարության համար և այլն.

4. Գործուղում և նախապարհածայն գործուղում ծախադարձի ու բարձրագույն ծախքերի՝ որապահիկ, ընակարան, ճանապարհածախք, փոխադրական ծախքեր պաշտոնական գործերով (տեղում կատարվող) թեթև արան սպարակի պահպանում: Յեթե տրանսպորտան աշխատում և անտեսավարական հիմունքներով, ապա նրա ծառայողների աշխատավարձը հաշվառվում է թեթև տրանսպորտի հատուկ հաշվառքը, իսկ նոմենկլատուրայի 4-րդ հոգվածին են վերաբերում տրանսպորտի առանձին ծառայությունների վճարը:

5. Նենքերի պահպանումն ու տնտեսական ծախքեր

Կապարավարձ, վառելիք, լուսավորության ծախքեր, մաքրության պահպանման ծախքեր, ջուր կոյուղի, գույքի ու տնտեսական նյութերի ծախքեր, ուրիշի սպարատով շենքերի պահպանման ծախքեր, շենքերի ու անտեսության մեջ զործադրվող գույքի բնթացիկ նորոգում, նրանց ապահովագրումը շենքերի համար, առնվազ հարկեր, այլ և լինտային տուրք: (Հողամաների).

6. Ամորտիֆացիա ա) շենքի և մեքենայական մտուի, բ) տնտեսական գույքի ու սարքավորման.

7. Գրասենյակային ու փոստինագրական ծախքեր.

Գրենական ու հաշվային պիտույքներ, լրացքեր, ամսաթերթեր, տեղեկանքներ, փոստ-հեռագրական ծախքեր, հեռախոսներ, դրամական փոխադրումների համար կանարվող ծախքեր, հրահանդների ըրջարերա-

կանների և հայտարարությունների (վաչ բեկումային) տպագրական ծախքեր :

8. Ապրանիների պահպանման ու ներքին փոխադրության ծախքեր .

Պահեստների ու խանությունների ապրանքների ապահովագրում, ուրիշների պահեստներում ապրանքների պահպանման համար վճար, ապրանքների կըռումն ու վերափաթթոցումը վաճառքի համար, մի շնչից մյուսը կատարվող ներքին փոխագրության ծախքեր .

9. Տարայի ծախքեր

Տարայի փոխագրության, նորոգման, մաքրելու, ախտահանման ծախքեր՝ տարայի զնի իջեցում մաշվածության հետևանքով .

10. Հարկեր և տուրմեր

Արհեստագործական հարկ, դրոշմատուրք, մուր հակային, նոտարային, բորսային և գրանցման տուրքեր, այլ տուրքեր :

11. Վճարված հանձնարարողչեք . (կոմիսիա)

Կոմիտոններներին վարձարարություն՝ ապրանքների վաճառքի, ինկասույթի փոխագրության ու բարձման աշխատանքների համար :

12. Կուլտուր-կրթական ծախքեր

Զանազան կուլտուր-լուսավորական ծախքեր . ուսումնական հիմնարկներում թոշակառուներին արվազ գումարներ, վորոնք ծախսվում են ըստ նախահաշվի (վոչ ի հաշիվ կուլտ-ֆոնդի) . ձեռնարկության բանվորների և ծառայողների մեջ տարվող կուլտ-լուսավորական ծախքերը, վոր կատարվում են համաձայն կուլտիվ պայմանագրի, վերաբերում են այսատավարձի վրա հաշվող ծախքերի խմբին,

13. Այլ ծախքեր .

Ծեկլամ, տնտեսական հետազողություններ, ցուցահանդեսներ, համագումարներ և խորհրդակցություններ, ապրանքների նմուշներ և եքսպերտիզմ, ծառայողների յերաշխավորյալ ապահովագրում, այլ ծախքեր .

Առեւտրի ժողկոմատի նոմենկլատուրայի 1928 թվի հրատարակության մեջ ընդհանուր առեւտրական ծախքերից առանձնացված են հետեւյալ ծախքերը, վորոնք նույնպես ծածկվում են ապրանքների վրա կատարվող հավելումով, սակայն վորոնք պետք է հաշվառվեն առանձին :

Դ. ՊԱԿԱՍՈՐԴԻՆԵՐ Ա.ՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆ-ՄԱՆ ՈՒ ՎԱՃԱՌՈՒԹԻ ՀԵՏԵՎԱՐՅՈՒՎՈՎ^(*)

Այս հաշվին են վերաբերում այն պակասորդները, վորոնք հայտարերիցում են պահեստների ու խանությունների միացորդների ցուցակագրման ժամանակ և վորոնք բացարկում են ընական պատճառներով և վոչ թե այս կամ այն անձնավորության հանցագործությամբ : Յեթև ապրանքների մի տեսակից մյուսին անցնելիս մի տեսակի մեջ հայտարերիվամ և պակասորդ, մյուսի մեջ՝ ավելցուկ, ապա պակասորդի գոմմարից վորա պիտի զարդ ավելցուկի գումարը :

^(*) 1927-28 թ . համար հրատարակած՝ Ասեւտրի ժողկոմատի նոմենկլատուրայի համաձայն, այս պակասորդները, ինչպես և վարկային ծախքերը մտնում ենին ընդհանուր (ընդհանուր առեւտրական) ծախքերի մեջ :

Ե. ՎԱՐԿԱՅԻՆ ԾԱԽԳԵՐ

Այս հաղվածի մեջ հաշվառվում են փոխառությունների, պարտքերի ու հատուկ վարկերի համար արված տոկոսներն ու կոմիսիան (բացի արտադրական փոխառություններից ու վարկերից), այլ և մուրհակների դեղման համար և հաշվարկումների հաշիվներով վճարվող տոկոսները։ Այս ծախքի չափը չըջանառության վերաբերմանը, այլ և առլրանքային վարկի համար վճարվող տոկոսների գումարը վորչելիս, հանգում և առլրանքային վարկի հաշվին ստացվող տոկոսների գումարը։

Ծանրքություն ընդհանուր առելորական ծախքերի նոմենկլատուրայի

1. Բնդհանուր (ընդհանուր առելորական) ծախքերի վերը բերված նոմենկլատուրան կ. Ա. Հ. Շ. Մ. Առելորի ժողկոմատը հրատարակել և մթերող ու առելորական կազմակերպությունների համար վերջներիս թվին են պատկանում բոլոր արհեստագործական միությունները և արհեստագործական կոոպերատիվների գույքը։ Այն արհեստագործական միություններում և կոոպերատիվներում, վարոնք ունեն արտադրական ձեռնարկաթյուններ, առելորական ծախքերի նոմենկլատուրայի մեջ հեշտած ծախքերից շատերը, ինչպես վերը ցույց ենք տվել, մտնում են արտադրական ծախքերի խմբի մեջ։ Խոկ այն բարս ծախքերը, վորոնք արտադրության հետ կապ չունեն, պետք և հաշվառվեն վերը բնդհանուր (բնդհանուր առելորական) ծախքերի նոմենկլատուրայի համաձայն՝ այդ ծախքերի թրվում հաշվելով նաև։ 1) առլրական կազմակերպության

կողմից վաճառվող ազգանքների պահպանման ու վաճառքի հետեւնքով առաջացող պակասորդները և 2) առելորական վարկի ծախքերը։

2. Վերոհիշյալ, ծախքերը, վորոնք ծածկվում են հավելումով, զրվում են վնասների հաշվին։

Վարչականագարական ընդհանուր առելորական ծախքերի 20% -ային իջեցման որենքի հիման վրա (տես կ. Ա. Հ. Շ. Մ. Ժողկոմի որոշումի 1927 թվի 30—ՎԼ վորոշումը), վերոհիշյալ ծախքերը բաշխվում են. ա) «անկախ» և բ) «կախյալ» ծախքեր։ Համաձայն կ. Ս. Հ. Մ. Բանդյուկանության ժողկոմատի շրջաբերականի, Առելորի ժողկոմատի նոմենկլատուրայի ծախքերից անկախ ծախքեր են համարվում։ 1) Հարկերն ու տուրքերը և 2) վարկային ծախքերը։

Կախյալ ծախքեր—բոլոր մնացած ծախքերը։

3. Բնդհանուր (բնդհանուր առելորական) ծախքերի հաշվին գրվում են ըստ նոմենկլատուրայի մեջ բերված հողվածների, այլ ծախքերը պետք և նախատեսված լինեն ծախքերի նախահաշվով։ Այնուագործական միություններում և կոոպերատիվներում, բացի այդ, կարող են լինել այնպիսի ծախքեր, վորոնց համար կազմված և հասուկ փոնկ. այս դեպքում համապատասխան Փոնկից կատարված ծախքերը գուրս են զրվում վոչ թէ վնասների հաշվին, այլ այլ փոնկի։

4. Յեթի վորեն ոժանդակի ձեռնարկի (որին արարածության) հաշվառումն առանձնացվում և տնտեսական ձեռնարկի շահագործման հաշվով, նախատեսվող վրականացների նըս շահավետությունը և նրա ծառայությունների կանոնավոր հաշվառումն ըստ առանձին բաժինների, ցեխերի և այն—այլ ձեռնարկի բանվոր-

ների ու ծառայողների պահպանումը չի անցնում նախաշվային ծախքերի հոդվածներով, այլ հաշվառվում և շահագործման հատուկ հաշվում։ Այդ հաշվից կալկուլացիան կատարելիս դուրս ե գրվում ծառայությունների արժեքը, վորպես համապատասխան ծախքեր (վերադիր արտադրական կամ ընդհանուր առետրական)։

5. Կազմակերպության ծախքերի մեջ չպետք է մտնեն այնպիսի ծախքեր, վորոնք նրա նպատակների հետ անմիջականորեն կազ չունեն և չեն նախառեսված նրա կանոնադրությամբ, որինակ՝ այնպիսի ծախքեր, վորպիսիք են այլ կազմակերպությունների տրվող նոպատճերն ու նվիրատվությունները, կարող են կատարվել միայն սուացված ողուտների բաշխածան կարգով։

6. Դրամագույններին ու ֆոնդերին հատկացնում-ներ կատարելը կարող է աեղի ունենալ ոգուտների բաշխման կարգով. այդ կանոնից բացառություն կարող են համարվել ամորտիֆացիան (արժեքի շինցման) ֆոնդին հատկացնումներ կատարելը, վոր ընթացիկ ծախքերի հաշվով և անցնում, և սպասվող վնասների համար բեղերվների ֆոնդին հատկացնումները, վոր կատարվում են առբեկան հաշվինների փակման ժամանակ և հաշվապահությամբ ձեւակերպվում ողուտների, ու վնասների հաշվի գերետովը։ Մյուս բացառությունը կուտփոնդի կազմելու յեղանակն է։ Այս ֆոնդը կազմվում է, արհեստագործական կոոպերատիվի Փինանսական խորհրդակցության վորոշման համաձայն (1929թիվ նոյեմբերի 29-ի № 5-42 արձանագրություն), ծախքերի ընդհանուր նախահաշվով միջոցների հատկացնումով։

IV. ԿԱԼԿՈՒԼԱՑԻՎԵ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ա. ՄԹԵՐՈՒՄՍՅԻՆ ԿԱԼԿՈՒԼԱՑԻՎԵՐԸ

Գրված ապրանքների մթերման արժեքը վորոշվում և այդ ապրանքները տրված կազմակերպության պահեստում ստացվելուց հետո։

Վերադիր ծախքերի ընդհանուր գումարը ավելացվում և վաճառողի առետրական հաշվի դումարին^{*)}, այդ ապրանքի ինքնարժիք վորոշման համար։ Հաշվի մեջ գրված ապրանքի միավորի ինքնարժեքը (հատիք, քաշի, միավորի կամ չափի միավորի) վորոշվում և հետեւվալ յեղանակով։

ա) յեթե հաշվով ստացված ապրանքը միատեսակ է, ապա վերադիր ծախքերի ընդհանուր գումարը բաժանվում և ապրանքի միավորների քանակի վրա։ (Կըովիվ ապրանքների միավորի ինքնարժեքը վորոշելիս, նախապես վորոշվում է ապրանքի զուտ քաշը (դուրս յեկած տարայի քաշը), յեթե, իհարկե, հաշվի

^{*)} Հաշվի գումար պետք է ընդունել միայն նրա մեջ նշանակված ապրանքի արժեքը։ Խսկ այն ծախքերը, վոր ապրանք վաճառողը հաշվին ավելացնում է (որինակ՝ փաթթուցումը, փոխադրության ծախքը, բեռնումը և այլն), պետք է վերադիր ծախքեր հաշվել, յեթե հաշվի մեջ մտնում են նաև վարկի տոկոսները, ապա այդ տոկոսները պետք է դուրս գալ վերադիր ծախքերից և ավելացնել ընդհանուր առետրական ծախքերին։

մեջ ցույց և արժած ապրանքի քաշը սարտարի չետ միաւնի:

բ) յեթե ընդունված և տարրեր տնօւների ու տնօւների ապրանքներ, ապա վերապիր ծախքերը պետք է բաշխել այդ տարրեր անուների ու տեսակների ապրանքների յուրաքանչյուրի վրա, նայած թե նրանցից ամեն մեկը ի՞նչ վերապիր ծախքեր են պատճառել: Բնդ վորում ուղղակի ծախքերը, այսինքն՝ այն ծախքերը, վորոնք միայն վորուչ անունի կամ տեսակի ապրանքի վրա յեն կատարվել (ինչպես, որինակ՝ վորուչ ապրանքի փաթթուումը, բնական կորուստները ձանապարհին եալին) պետք է ավելացնել նույն այլ ապրանքների արժեքի վրա: Ապրանքի քաշը չետ կազունեցող ծախքերը, որինակ, վորուչ ապրանքը, պետք է բախչել ապրանքների մեջ նրանց քաշի համեմատայած գեպքում ել պետք նախորոք վորուչել կշռովի ու չափովի ապրանքների քաշը: Վերջապես, այն ծախքերը, վորոնք կատարվում են ապրանքների արժեքի չամեմատական չափով, որինակ՝ ապահովագրման պրեմիա, բորսային ծախքեր և այլն, ապրանքների տարրեր անունների ու տեսակների վրա բաշխուում են նըստացից յուրաքանչյուրի արժեքի գումարի համեմատական չափով:

Ծանոթություն

1. Ճանապարհի խոչոր կորուստները, վորոնք իրենց չափով գերազանցում են բնական կորուստների նորմաները (աես այս մասին Առեւրի Փողկոմատի վորումը*), չպետք է մտնեն սուպագած ապրանքի

*). Տես. 1) Нормы убыли грузов при складском хранении и гужевых перевозках. Постановление Нар-

ինքնարժեքի մեջ: Յեթե այդ կորուստները չեն կարող դրվել այլ կորուստների մեջ մեղաղրվող անձանց հաշվին, պետք է հաշվառվեն վորապես պատահական վնաս (ոգուստների ու վնասների հաշվովը): Կորուստների ամեն մի նման գեպք պետք է հաստատված լինի համապատասխան արձանագրությամբ:

2. Վերաղիր ծախքերը միությունները ձեվակերպում են «վերաղիր ծախքերի» հաշվի գերեսով: Սակայն կարող ե պատճենել, վոր վաճառվող ապրանքները շատ անուններ ունեն և յուրաքանչյուրին համոզ վերաղիր ծախքերը չնչին զումարներ կազմեն, վազի հետեւալնուով այլ բոլոր մանր գումարների գրանցումը հաշվառպահության համար ստեղծի իրեն չարգարացնող մեծ աշխատանք: Նման գեպքերում վերադիր ծախքերը թողնվում են վերաղիր ծախքերի հաշվին և ապրանքների վաճառքից հետո անց են կացվում «վաճառքի» հաշվին գերեսի: այս կամ այն տոկոսի չափով՝ վաճառված ապրանքի արժեքից յելնելով:

Բ. ԱՐՏԱՐԱԿԱՆ ԿԱԼԿՈՒԼԱՑԻԱ

Կալկուլացիայի դործի հիմնական ոպայմանն է հանդիսանում արտադրության բոլոր նյութերի մըսիումների ու առանձին ծախքերի ամենամերամասն հաշվառումը՝ արտադրության ու նրա առանձին մասերի հետ առընչության ունեցող բոլոր գործողու-

комторга от 13—ХI—1924 г. и таблицы норм убыли изд. 9-ое Наркомторга, цена 18 коп. 2) Предельные нормы естественной убыли товаров в оптовой торговле.—Циркуляр Наркомторга от 28—Х—1926 г., изд. 3-е, Наркомторга 1928 г., цена 15 коп.

թյունների համապատասխան վաստավթղթերով ձևը՝ դրիտ ձևակերպման պայմանով։ Կալկուլացիայի համար անհրաժեշտ տվյալները պետք են ստացվեն արտադրության հիմնական ու ոժանդակ հաշվառման համապատասխան արտադրական հաշվիներից։ Բարդ արտադրությունների մեջ հաշվառման գործում արտադրական պլոցենը պետք է բաժանված լինի ցեխերի, բաժինների, ոժանդակ ու կողմնակի արտադրական մասերի մեջ՝ դրանցից ամեն մեկին բանալով ոժանդակ համապատասխան համար առանձին հաշիվ։ Առանձին ցեխերի, բաժինների ու արտադրական ոժանդակ ձեռնարկությունների համար կատարվող ուղղակի մըսի ուղղությունը պետք է համապատասխան հաշվիներով գրշունցվին։ Ամեն մի ձեռնարկություն պահանջում է այլ արտադրական հաշվիների առանձին սխաեմ՝ իր տեխնիկական ու կազմակերպչական ստանդանաշտկություններին համապատասխան։

Հնարավորության սմահմաններում առանձին ցեխերում ու արտադրության առանձին մասերում պետք է առանձին պատվերների (կամ առանձին ապրանքային պարտիայի) վրա կատարվող ծախքերը հաշվառվին ջոկ-ջոկ։

Մի քանի արտադրությունների մեջ, վորտեղ արտադրվող առանձին առարկաները մի ձեռքից մյուսն են անցնում (հոսում են) կոնվեյերների յեղանակով՝ աշխատանքի առանձին մասերը հաշվառվում են ձեռքից-ձեռք անցնելու պլոցենի ընթացքում։ այդ հաշվառումը կատարվում է պատվերին կցված հատուկ տաղանդում կարելով, վորոնք ներկայական հիմնարժեքին, իհարկե, վերջինիս ավելացնելով ընդհանուր առեւտրական ծախքերի ու դրամագույնի կուտակման անհրաժեշտ հավելում։

Վորական թերթիկների հետ՝ աշխատավարձի հաջանամար։ Փաստաթղթերի կանոնավոր ձևակերպումը և հաշվառման հետ դրվածքն անհրաժեշտ են մանրամասն կալկուլացիայի անհրաժեշտ նյութ ստանալու համար։

Արտադրության մեջ կալկուլացիան լինում է 1. նախահաշվային կամ նախնական և 2. կատարողական կամ վերջնական (հաշվետվական)։

Նախահաշվային կալկուլացիան պետք է կատարվի արտադրության սկսելուց առաջ։ Այդ կալկուլացիան այն է, վոր արտադրական ձեռնարկը, ունեցած տվյալների ու նախկին կատարողական կալկուլացիաների հետումները պետք է համապատասխան հաշվիներով գրշունցվին։ Ամեն մի ձեռնարկություն պահանջում է այլ արտադրելիք սպառանքների արտադրական արժեքը, այլ և այն հավելումը, վոր անհրաժեշտ նույն այլ ապրանքների ռեալիզացիայի հետ կապված ծախքերը ծածկելու համար։ Արտադրական արժեքը վորոշվում է տվյալ ապրանքներին և վերջներին մի միավորին անհրաժեշտ առանձին մախուտների հաշվառման հիման վրա, վորից և մենթագրաբար վորոշվում է արտադրելիք սպառանքի փակուրի ինքնարժեքը։ Նախահաշվային կալկուլացիան է պարզել, թե չուկայում գոյություն ունեցող կինը վորոշան և համապատասխանում նույն այդ ապրանքի արտադրական ինքնարժեքին, իհարկե, վերջինիս ավելացնելով ընդհանուր առեւտրական ծախքերի ու դրամագույնի կուտակման անհրաժեշտ հավելում։

Կատարողական կալկուլացիան կատարվում է ապրանքների արտադրությունից դուրս դադուց հետո։

Կալկուլացիայի յեղանակները տարբեր են, տարբեր արտադրությունների վերաբերմամբ։ Բնդհանուր առմամբ այդ տարբեր յեղանակները հետեւյալներն են.

1. Պարզ արտադրություն՝ ամբողջ արտադրական պրոցեսի միանական հաշվառմամբ ե.

Բարեգ արտադրություն, վոր բաշխում և մի չար առանձին արտադրական սցրոցեաների, վորոնք հաշվառմամբ են առանձին-առանձին։

2. Առանձին առարկաների արտադրությունը գործանային առանձին «պատվերի» համաձայն՝ այսպիսնքների առանձին ստացվող պարտիաների առանձին կալկուլացիայով ե.

արտադրություն, վոր տեղական բնույթ ունի մասսայական վորեւ ապրանքի արտադրությամբ, վոր պիտին կալկուլացիայի յի յենթարկիում պարբերաբար (ամեն ամիս)։

3. Արտադրություն՝ վորոչ տեխնիկական առանձնահատկություններով, վորոնցով և պայմանավորված այդ արտադրությունների հաշվառման համապատասխան կազմակերպումն ու յեղանակը ե

արտադրություն՝ այլ տեխնիկական առանձնահատկություններով (առաջնից տարբեր), վորոնք ու այժմանավորում են հաշվառման համապատասխան կազմակերպում և յեղանակ, արտադրության մեջ վերամշակված հումույրի ու նյութերի արժեքը՝ առանձ արտադրությունից ստացվող արժեք ունեցող մնացորդների ու ավելցուկների արժեքի, ավելացրած աւատավարձն ու արտադրական ծախքերի՝ գործարք էտիմում և ավելաց ապրանքների կամ կիսաֆարբիկատ արտադրական ինքնարժեքը։ Մի քանի արտադրու-

թյունների մեջ հիմնական նյութի հատերի քանակը կարող ե համապատասխանել արտադրված ապրանքների հատերի քանակին (որինակ՝ կոչիկների արտադրության մեջ)։ այս գեղքում ապրանքի միավորին անհրաժեշտ նյութի հաշվելը գժվարությունների հետ չկապված։ Մի քանի այլ գեղքերում վերամշակված նյութերի և հումույթի ընդհանուր արժեքը արտադրութած ապրանքի կամ կիսաֆարբիկատի արտադրական արժեքը վրացնելիս, պետք ե բաշխվել՝

ա) միհնույն անվան ապրանքներ կամ կիսաֆարբիկատներ միատեղ արտադրելու վեպքում՝ տվյալ ապրանքների կամ կիսաֆարբիկատների համար գործադրված նյութերի և հումույթի արժեքի գործարը բայց անելով արտադրված միավորների թվի վրա։

բ) տարբեր անունների և տեսակների ապրանքների և ամ կիսաֆարբիկատների միատեղ արտադրելու վեպքում, յերբ առանձին-առանձին հարավոր չի հաշվառել մսխված հումույթի կամ նյութերի արժեքը, բայց իսկ կատարվում ե վորձերի հիման վրա գոյություն ունեցող նորմաներով։ Եել յեթե այս գեղքում պարզվի, վոր տվյալ խումբ ապրանքների վրա փաստորին ամփակված հումույթի ընդհանուր քանակը ավելի շատ, կամ քեզ ե, քան նորմաներով նախատեսված ե, ապա ավելցուկի կամ պակասորդի արժեքը բաշխվում ե (ավելացվում կամ հանվում ե) առանձին առարկաների մեջ համեմատական չափով, նրանց վրա մսխված հումույթի արժեքին՝ նորմաներով հաշվված։

Մսխված հումույթի ու նյութերի ընդհանուր գործարք պետք ե հաշվել առանձին ցեխերով կամ արտադրության առանձին մասերով, ընդ վորում արտադր-

բանքի կալկուլացիան վորոշ զեպքերում կատարվուի ըստ ցեխերի, այլ գեպքերում՝ արտադրության վերաբերմամբ՝ ամբողջությամբ:

Տաղաւոր կամ կիսաթարթիկամ
ների պատրաստման համար վճարված կամ վճարելի
աշխատավարձի գումարը նրանց արտադրական արժե-
քը վորոշելու համար՝ առանձին առարկաների մե-
րաշխվում ե հետեւյալ յեղանակով.

ա) գործարքային վճարի գեպենում՝ աշխատա-
վարձի գումարը միացվում է ապրանքի արտադրական
միավորի վրա ընկնող այլ ծախքերին (արտադրական
միավորներ են համարվում՝ հատը, զույգը, տասնյա-
կը, դյուժինը կամ քաշի, չափի միավորը՝ նայած առ-

ր) վլորչ ժամանակի համար (որական, ամսական
և այլն) վճարվող աշխատավարձի և միենույն անվան
ու տեսակի ապրանքների կամ կիսափառը կատաների
արտադրության պայմաններում—աշխատավարձի ընդ-
հանությունը գումարը բաշխվում է տվյալ ժամանակում ար-
տադրվող ապրանքների միավորների թվի վրա:

գ) վորոշ ժամանակի համար (որական, ամսական
և այլն) վճարվող աշխատավարձի և տարբեր անվան ու
տեսակի ապրանքների կամ կիսափարթիկատների ար-
տադրության պայմաններում, յեթե աշխատավարձն
անհնարին և առանձին ապրանքների (կիսափարթիկատ-
ների) վերաբերմամբ վորոշը—աշխատավարձը բաշխ-
վում է կոյություն ունեցող հատուկ նորմաներով: Այս
դեպքում, յեթե չայտարերվի, վոր իրականում վճար-
ված կամ վճարելիք աշխատավարձի գումարն ավելի յե-
կամ պակաս է նորմայով՝ հաշվված, ապա ավելցուկ

կամ պակասորդք գումարը բաշխվում ե (ավելացվում
կամ հանվում ե) նորմաներով հաշվված դումարների
մեջ համեմատական չափով:

Արտադրական ծախքները պետք է ժամանակին հաշվառվեն և վոչ միայն վճարված ծախքերը, այլև այն ծախքերը, վորոնք պիտի վճարվեն. վերջիններս առանձնացվում են: Այս կերպ հաշվառված բոլոր ծախքերը մտնում են այս կամ այն ժամանակաշրջանում արտադրված ապրանքների արտադրական արժեքի մեջ: Այն գեղքերում, յերբ ծախքերի վորոշ խումբ կատարվում է տարեկան մի անգամ կամ ամսական, կամ այլ ժամկետություն պարբերաբար, կալկուլացիայի ժամանակ հաշվի յե առնվազագույն միայն կատարված ծախքերի այն մասը, վոր ընկնում և արտադրված ապրանքի համապատասխան ժամանակաշրջանի վրա:

Այսովհետով՝ նախքան արտադրության առանձին առարկաների արժեքը կալկուլացիան, վորոշվում է այն կատարված ծախքերի գումարը, վորոնք պետք է արտադրված առլրանքների տվյալ պարտիայի արժեքի մեջ մտնեն :

Յեթև արտադրությունը բաշխվում է մի քանի ցեղի սկզբանից առաջ առանձին հաշվառում են. 1) արտադրվող արդյունաբաների, ապա առանձին հաշվառում մասերի ցեխային արժեքը, վորի մեջ մտնում են ցեխի մեջ կատարված բարեկը, վորի մեջ մտնում են ցեխի մեջ կատարված բարեկը արտադրական հիմնական մստումները և բոլոր ցեխերի ցեխային բոլոր արտադրական ծախքերը. (արված ապա արդյունաբաների անցած ցեխերի. 2) արտադրվող ապա արդյունաբաների ընդհանուր գործարանային արժեքը. — վերջինիս մեջ են մտնում պատրաստվող ապրանքների ցեխային արժեքերից և ընդհանուր գործարանային այն

ծախքերը, վորոնք այս կամ այն հիմունքներով միաց վում են ապրանքների ցեխային արժեքին :3) արտադրության լրիվ արժեքը վերջինիս հաշվելու համար ապրանքի ընդհանուր գործարանային արժեքին ավելացվում են ընդհանուր առելարական ծախքերը՝ նաև բուքաք վորոշված տոկոսի հավելումի ձեվով : Ուղղակի (ցեխային) ծախքերն ըստ առանձին ցեխերի հաշվելիս, ընդհանուր գործարանային ծախքերը բաշխվում են հետեւյալ հիմունքներով .

ա) յեթե ցեխերը կազմում են արտադրության առանձին մասը, յերբ մի ցեխի աշխատանքը չարունակում է յուս յեխը, շարունակելով վերամշակման յենթարկել կիսաֆարբիկատը, վորի արժեքն աստիճանաբար աճում է, ապա այս գեղագում հաշվառվում է միայն կիսաֆարբիկատի ցեխային արժեքը՝ առանց ընդհանուր գործարանային ծախքերի հավելման. այս վրջին ծախքը ավելացվում են ցեխային ծախքերին միայն արտադրության վերջին ըրջանում :

բ) յեթե ցեխերը շինում են միենալի ապրանքի (արտադրանքի) մասերը, հաշվում է բոլոր մտարի ցեխային արժեքը և ապա, արտադրական արժեքը վորոշելու համար, այդ ընդհանուր ցեխային արժեքին ավելացվում են արտադրական պրոցեսի ժամանակաշրջանի (ամսական) ծախքերը. ընդ վորում յերբ միաժամանակ արտադրվում են մի քանի կամ բազմթիվ տեսակի ապրանքներ, ապա ընդհանուր գործարանային արժեքը հաշվում է յուրաքանչյուր տեսակի ապրանքի ամբողջ քանակի համար՝ նրանց ցեխային արժեքի համատական չափով : Որինակ, յեթե մի ամսական ընթացքում պատրաստված է 4000 միավոր ապրանք, վորի

ցեխային արժեքը 1200 ու. յի, 1000 միավոր մի այլ ապրանք՝ 600 ու. ցեխային արժեքով և 500 միավոր յերբուդ ապրանք՝ 2200 ու. ցեխային արժեքով— ապա մի ամսում կատարված 1000 ու. ընդհանուր գործարանային ծախքերը պետք է միացվեն մի ամսում արտադրված ապրանքների ցեխային արժեքին՝ յուրաքանչյուր տեսակի ապրանքների արժեքի համեմատական չափով :

$$1) \frac{1000 \times 1200}{4000} \quad 2) \frac{1000 \times 600}{4000} \quad 3) \frac{1000 \times 2200}{4000}$$

կամ զումարներով

$$1) 300 \text{ ո.}, 2) 150 \text{ ո.}, 3) 550 \text{ ո.}$$

դ) ստանդակ բաժինների կամ արտադրությունների ծառայությունների արժեքը կալկուլացիայի յենթարկելիս, հիմնական մասումներին, վոր հաշվում են այդ բաժիններում և արտադրություններում, միացվում են միայն ցեխային ուղղակի ծախքերը, իսկ ընդհանուր գործարանային ծախքերը չեն ավելացվում :

ե) կողմնակի մթերքներ արտադրող հատուկ ձեռնարկությունների հաշվառման ժամանակ (կողմնակի արտադրություն) վորոշվում է նրանց արտադրանքի գործարանային լիիվ արժեքը, այսինքն՝ հաշվառման լիև ցեխային թե ընդհանուր գործարանային ծախքերը :

ի) արտադրական մի քանի ընդհանուր ծախքը, ավելի ձշղբիտ կարկուլացիայի նորատակով, կարելի յերաշնել ցեխերի և առանձին ստանդակ ձեռնարկների վրա հատուկ հիմունքներով : Որինակ, չենքի համար կատարվող ծախքերը՝ ավելի ցեխի կոմ արտադրության պատրաստված տարածության, պատելիքի ծախքերը՝

կառարանների թվի կամ առանձին ցեխերի և արտադրությունների շենքերի խորանարդ մեծության, ելեքտրական լուսավորության ծախքերը՝ համապատասխան ելեքտրական հաշվիչների ցուցմունքների կամ վառվոզ ձրագների թվին՝ և սմուրտիզացիան՝ տվյալ ցեխի կամ արտադրության գույքի արժեքից յենելով.

զ) յեթե միենույն շարժիչ մեքենան սպասարկում է յերկու կամ ավելի առանձին արտադրություններ կամ ցեխեր, անհրաժեշտ է հաշվի առնել թե նրանցից յուրաքանչյուրի համար շարժիչ մեքենան ինչքան ժամանակ և աշխատում վորից հետո նրա ծախքերը համեմատական չափով պետք է բավարար այդ ցեխերի կամ արտադրությունների մեջ։ Խսկ յեթե միենույն շարժիչ մեքենան սպասարկում է միաժամանակ յերկու կամ ավելի արտադրություն, ապա նրա պահպանման ծախքերի գումարը ողետք է բաժանել արտադրությունների մեջ՝ յենելով առանձին արտադրություններին անհրաժեշտ ուժի քանակից։ Յեթե միենույն շարժիչ մեքենան սպասարկում է յերկու կամ ավելի արտադրություններ կամ ցեխեր հաշվումով ժամանակի միայն մի ժամը ընթաց ըում, ապա ընդհանուր ծախքերն արտադրությունների (ցեխերի) մեջ բաշխելիս պետք է համապատասխան ուղղում մտցնել։

է) նույն կերպ պետք է բաշխվեն նույն այն ծախքերը՝ վորոնք կատարվում են այն սժանդակ արտադրությունների մեջ, վորոնք ապրանք չեն արտադրում, այլ շարժիչ մեքենայի նման միայն արտադրությունն են սպասարկում (որինակ՝ նորոգման արհետանոց և այլն)։ Յեփ յեթե այս կերպում ոժանդակ այդ ձեռնարկությունը վոչ միայն սպասարկում է

այլ այլ արտադրությունը, այլև նրա ծառայությունները վաճառվում են կողմանակի սնձանց կամ հիմնարկի ների, ապա վերջիններից ստացված յեկամտի ընդհանուր գումարը պետք է հանել այն ծախքերից, վորաշչովելու յեն արտադրության ցեխերի մեջ։

ր) Ի նկատի առնելով, վոր կիսաֆարբիկառների ցեխային արժեքը վորոշելու մոմենտին ոժանդակ բաժնի կամ արտադրության լրիվ արժեքը հայտնի չել լինում, ապա ծախքերն ըստ ցեխերի բաշխելու համար վերցնում են նախորդ ժամանակաշրջանի ավյալները՝ այլ ոժանդակ բաժնի կամ արտադրության ծառայությունների արժեքի վերաբերմամբ։

Եսանձին արտադրական միավորների (ապրանժաններ կամ կիսաֆարբիկառներ) արժեքի կայկուլացիան կատարվում է հետեւյալ յեղանակով։

ա) պարզ արտադրության գեղագիրում և միենույն անհանկի ու անվան ապրանժի անրնդհատ ամբողջ տարվա ընթացքում արտադրվելու պայմաններում արտադրական ծախքերի այն գումարը, վոր կատարվել է ավյալ ժամանակաշրջանի արտադրած ապրանժների վրա, բաժանվում է վերջինիս թվի վրա։

բ) այն գեղագրում, յերբ արտադրությունը սեղմանելին կամ ընդհանակող բնույթ ունի, արտադրության ժամանակ ապրանժների վրա ընկնող արտադրական ծախքերի գումարին պետք է ավելացնել արտադրական ծախքերի նորիորոք վորոշված տոկոսով մի գումար, վոր ընկնում է արտադրության կանդ տոնելու կամ կրնուավելու ժամանակը վրա։

զ) միաժամանակ տարբեր անուններով ու տարբեր աւասակների ապրանժների արտադրության պայ-

մաններում ցեխային արտադրական ծախքերի այն դումարը, վոր վերաբերում և այդ ապրանքների արտադրության ժամանակաշրջանին, առանձին ապրանքների ցեխային արտադրական արժեքի վարուժան համար բաժանվում է համեմատական չափով կամ 1) նրանց արտադրելու համար մասնական աշխատանքի արժեքի գումարի վրա (աշխատավարձի՝ տունց լուսացուցչ համեմատների), կամ 2) նրանց համար զործագրած նյութերի արժեքի գումարի վրա, կամ 3) այդ յերկու գումարների ընդհանուր դումարի վրա:

Թե այդ յերեք յեղանակներից վորը պիտի կիրառել, կախված և արտադրության բնույթից: Յեթե արտադրված ապրանքների արժեքի մեջ նշանավոր տեղ և բնույթ նյութերի արժեքը և չափ չնչին արժեք անի ապրանքի վրա գործադրված աշխատանքի արժեքը տպա արտադրական ծախքերը պետք է բաշխել նյութերի արժեքի համեմատական չափով:

Յեթե այդ յերեք յեղանակներից և վոչ մեկը չեն տալիս ծախքերի բոլորովին լինի բաշխման պատկեր (որինակ՝ աշխատավարձի չափ բարձր ծախքեր անելու գեպքում), յերբ վորեն տեսակի ապրանքն արտադրելը պահանջում և չափ բարձր վորակի բանվորական ուժի կիրառում), առաջ կարելի յե ծախքերը բայց ներկայ գործադրված աշխատանքի ժամերի համեմատական չափով: Ամենից հաճախ կիրառվող յեղանակն է ծախքերի գումարը բաշխել աշխատավարձի դումարի համեմատ:

Դ) տարբեր տեսակի ապրանքների արտադրության գեպքում, յերբ ծախքերից վորեն մեկը կատարված և վոչ թե վող արտադրված ապրանքների համար, այլ

միայն ապրանքների մի տեսակի կամ մի խմբի համար, ապա այդ հատուկ ծախքերը պետք է առանձնացնել ծախքերի ընդհանուր գումարից և բաշխել միայն այն ապրանքների վրա, վորոնց վրա տվյալ ծախքերը կատարված են.

Ե) յեթե վորեւ արտադրության մեջ միևնույն հումույթից միենույն բանվորական ուժն արտադրում և յերկու տեսակի (կամ յերկու անուն) ապանք, (որինակ՝ յուղի գործարանում՝ յուղ և քուսով), ապա հումույթի, բանվորական ուժի և արտադրուկան ծախքերը բաժանվում են այդ յերկու ապրանքների համար գոյացության ունեցող շուկայի վների համեմատ, և հարկե, ի նկատի առնելով արտադրված ապրանքների մեկի և մյուսի քանակը: Իսկ յեթե քուսովի արժեքն արդեն նախարար վորոշված է և կարիք չկա այն նորից գնահատելու, ապա նրա արժեքի գումարը պետք և հանել արտադրության հիմնական ապրանքի արժեքը գումարից, վարպես արտադրության արժեք ունեցող ավելցուկ կամ մնացորդ:

Գ. ՎԱՃԱՌՈՒՅԻ ԳՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ընդհանուր առեվտրական ծախքերը ծածկելու և դրամագլուխ կուտակելու համար գնվող ապրանքների կամ արտադրվող ապրանքների լնգնարժեքին ավելացվող տոկոսային հավելումը վորոշվում է նախաչափով նախատեսվող ծախքերից յելնելով: Սակայն նախահաշվի ծախքերը սովորաբար նախատեսվում են ծախքերի ընդհանուր գումարները՝ առանց այն բաշխելու կամ սոսրաբաժանելու միության կամ կոռպերատիվի գործի առանձին ճյուղերի մեջ: Հենց այդ

պատճառով՝ առանձին գործարքների վերաբերմամբ
ծախքերի անհրաժեշտ չափը ճիշտ վորոշելու համար,
պետք է նախահաշվի կազմել և հաշվառել ծախքերը
գործի առանձին ճյուղերի վերաբերմամբ՝ նախորոշե-
լով տարրեր շրջանառություններին ընկնող ծախքերի
տոկոսի չափը։ Ծախքերի մեջտ բաշխումն անհրաժեշտ
է փորձի կուտակման և համապատասխան համելում
կատարելու համար։

Խան միությունների մեջ ծախքերի հաշվառման
բաշխումը պետք է կատարվի առանձին գյուղատնտե-
սական գործարքների ու արհեստագործական գոր-
ծարքների վերաբերմամբ՝ տարրեր ֆունկցիաներ ու
նույնուն կազմակերպությունների մեջ՝ այդ Փունկցիա-
ներից ամեն մեկի վերաբերմամբ (վարկային ու տե-
տրական), տարրեր արհեստներ սովորակող միու-
թյուններում՝ այդ արհեստներից յուրաքանչյուրի վե-
րաբերմամբ առանձին, գործի առանձին ճյուղերի հա-
մար ծախքերի հաշվառման ժամանակ պետք է բաց
անել հատուկ հաշվվորին պետք և գրանցել այն բոլոր
ծախքերը, վորոնք ուղղակի տվյալ ճյուղին են վերաբե-
րում։ Հետագայում, տարվա վերջում այդ նույն հաշ-
վին այս կամ այն համեմատական չափից յելնելով՝
պետք է ավելացնել նաև այն ծախքերը, վորոնք տար-
վա ընթացքում անհնարին են յելել բաշխել և վորոնք
հաշվառվել են հատուկ բաշխման յենթակա ծախքերի
հաշիվներում։ Այս վերջին ծախքերի համեմատական
բաշխման ժամանակ ի նկատի յեն առնվում նախ՝ գոր-
ծի բարդությունը, (քանի վոր գործի բարդությու-
նից առաջ են գալիս հարաբերական չափով մեծ ծախ-
քեր)։ յերկրորդ՝ շրջանառությունների չափն ու արա-

գորթյունը և յերրորդ՝ գործի տվյալ ճյուղի առանձ-
նահատուկ պայմանները։

Առանձին ապրանքների վերաբերմամբ հավելումի
չափը վորոշելիս, հավելման տոկոսը պետք է հաշվել՝
յելնելով ավյալ ապրանքի շրջանառության արագու-
թյունից, սկզբունքը ընդունելով, վոր մթերվող կամ
արտադրվող ապրանքի միավորի վրա ապրանքի
դանդաղ շրջանառության գեպքում ավելի բարձր
հավելման տոկոս պետք է դալ, և ընդհակառակը՝
փորքան ապրանքի շրջանառությունն ավելի արագ և
կատարվում, հավելման տոկոսն այնքան ավելի ցածր
պետք է լինի։

Մեկական արտադրության ապրանքների հավե-
լումները վորոշելիս պետք է ուշադրության տոնել,
նույնպես ավյալ ապրանքի արտադրության համար
անհրաժեշտ յամանակը։

Ապրանքների տարբեր տեսակների հավելումների
չափը հաշվելիս, անհրաժեշտ և ուշադրության տա-
նել նաև նրանց այն առանձին հատկությունները,
վորոնք այլ ապրանքների համեմատությամբ ավելի
կամ պակաս ծախքեր են առաջացնում։ Այսպես, որի-
նակ՝ ծավալով մեծ ապրանքները պահանջում են պահ-
պանման, չենքի ավելի մեծ ծախքեր, քան փոքր ծա-
վալ ունեցող ապրանքները, կան ապրանքները, վորոնք
պահանջում են պահպանման հատուկ պայմաններ,
վորոնք կապված են վորոշ ծախքերի հետ, վորպիսի
ծախքեր ուրիշ ապրանքների պահպանումը չի պա-
հանջամ։ Կան ապրանքները, վորոնք տալիս են ավելի
մեծ ընական կորուսներ, քան ուրիշ ապրանքներ։

Ապրանքի շրջանառության արագությունը հաշվե-

վում և հետեւյալ կերպով Ապրանքի մթերման ինք լիս Հայլելման այս կամ այն տոկոսը տվյալ առ բանքի վերաբերմամբ վորոշելու համար, անհրաժեշտ է ի նկատի առնել նաև ապրանքների վերը բերած տուանձին Հատկությունները:

Մանրածածախ առեվտրի մոջ զամառքի դինը վորոշնարժեքին պետք է հավելում անել նախորոք վորոշված այնպիսի տոկոսով, վոր ապահովում և թե ընդհանուր առել լուրական ծախքերը և թե այն հատուկ ծախքերը, վորոնք կապ ունեն մանրածախի կազմակերպման ու գեկավարման հետ: Այս վերջին ծախքերի հաշվառմամբ նաև մանրածախի համար հատուկ աշխատակիցների ծախքերը, սկսած ելատուրվեն առանձին ընդհանուր առել լուրական ծախքերից: Հավելումը մանրածախ գների վորոշման համար կատարվում է նույն հիմունքներով, ինչ հիմունքներով հավելում է կատարվում մեծաքանակ գների վորոշման համար:

Դրամգլուխ կուտակելու վերադիրը (գուտ սպուտը) կատարվում է վորոշ տոկոսով, վոր ավելացվում է ապրանքի լրիվ ինքնարժեքի վրա:

Այս գեղջում, յերբ վաճառքի համար գնվազ ապահովություն ունին տարբեր միջին շրջանառություն, ապա դրամագլուխի կուտակման հավելման տոկոսները պետք է տարբեր լինեն՝ տարբեր շրջանառության արագություն ունեցող ապրանքների համար: Վորքան արագ է ապրանքի շրջանառությունը, այնքան ցածր հավելում պիտի ասել ենդհակառակը, վորքան դանդար է շրջանառության արագությունը: Հավելման տոկոսը համապատասխանորեն բարձր պիտի լինի:

Սեփական արտադրության ապրանքների հավելումը վարչելիս, անհրաժեշտ է հաշվի առնել արտադրության մեջ դրված դրամագլուխ շրջանառության արագությունը, վորքան ավելի արագ է շրջանառությունը, այնքան ավելի ցածր կարող է լինել հավելման տոկոսը և, ընդհակառակը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յեթե վերը ցույց տված հիմունքներով կատարված կալկուլացիայից հետո հայտաբերվի, վոր ապրանքները զնահատված են շատ բարձր, քան շուկայի համապատասխան գներն են, ապա այդ համարմանքը ցույց է տալիս, վոր կամ կալկուլացիան ճիշտ չէ կատարված կամ այն, վոր դնման ինքնարժեքի վորոշման համար հաշվառված ծախքերը (վերադիր ծախքերը) շատ բարձր են և կամ այն, վոր ապրանքին շատ բարձր հավելում է արված:

Այսպիսի գեղջերում պետք է հավելման տոկոսն իջեցնել և հետագայի համար միջոցներ ձեռք առնել ապրանքի վրա յեկող վերադիր և առեվտրական ծախքերն իջեցնելու համար:

2. Յեթե տնայնագործներն իրենց տանը պատրաստած ապրանքների (կոռպերատիվ արտադրանքների) ընդունելությունը կատարում էն տարբեր տեղ, վորէ հետեւյանքով այդ ապրանքների ինքնարժեքները, փոխադրական բարձր պայմանների չնորհիվ, ստացվում են տարբեր, ապա այդ տարբեր ինքնարժեք ունեցող ապրանքների վաճառքի գինը վորոշվում է միատեղ, վոր միենույն ապրանքը տարբեր զերով չվաճառվի:

3. Կոռպերատիվին պատկանող հումույրի վերամշակումն անդամների տանը կալկուլացիայի յինթար-

կելիս, պետք և դիմովի վորպես արհեստագործական կոռուպերատիվի արտադրած պատրաստի ապրանք :

Այս գեղքում յերբեմն հումուլիթի քանակը, (վոր որվում և վերամշակման) ինքնըստինքյան վորոշում և արտադրելիք ապրանքի քանակը (որինակ՝ կոչվեների ձեզած մասերը տալուց ստացվում և համապատասխան քանակությամբ պատրաստի կոչվեներ)։ յերբեմն Ել անհրաժեշտ և վերամշակման արվող հումուլիթի քանակի վերաբերմամբ նախորոք վօրոշել ստացվելիք ապրանքի հավանական քանակը, (որինակ՝ 20 կիլոդրամ բաղից պետք և ստացվի 19 կիլոդրամ բաղից զործվածքներ)։

Վերամշակման տարբեր գեղքեր կարող են լինել.

ա) հումուլիթի բաշխումը և պատրաստի տողամիքի ընդունելություն կոռուպերատիվի կողմից՝ սունց վորիե արտադրական ծախքերի.

բ) արհեստագործական կոռուպերատիվի կողմից նուխորոք վորոշ վերամշակում պահանջող հումուլիթի բաշխում. — (որինակ՝ բուրգ զգելը կամ բաղից զործվածքին թել պատրաստելը)։

գ) այնպիսի ապրանքների ընդունելություն, վորպեսին արհեստագործական կոռուպերատիվի կողմից, նախքան նրանց վաճառքի հանելը, պահանջում և իրարում (սնօրք) կամ չղկում (օդյուկա)։

Վերջին յերկու դեպքերում պարանքների արտադրական արժեքի վարումն համար սնանագործնորին գնորդած գումարներին պետք և ավելացնել արհեստագործական կոռուպերատիվի կատարած ծախքերը աշխատավարձր և արտադրական ծախքերը։

Սակայն, բացի այդ, չամ հաճախ արհեստագործական կոռուպերատիվի անդամների տան արտադրությունը կոռուպերատիվից պահանջում և անդամների տեխնիկական սպասարկման հետ կապված ծախքեր՝ ապրանքների ընդունման, տեսակների բաժանելու և այլն, յերբեմն նույնիսկ անհրաժեշտ և լինում հրավիրել հատուկ հրահանգիչ՝ տնայնագործներին տանը աղնաթիյուն ցույց տալու հոմար։

4. Սկզբնական կոռուպերատիվների համար իրենց անդամների միջոցով հումուլիթի վերամշակման այն ձեռք, վոր նրանց համար նորմալ և հանդիսանում է, չպետք ե կիրառութիւնների կողմից իրենց անդամ ալտերների վերաբերմամբ, վորովհետեւ այդ ձեն արակելների ինքնագործունելության դարպացման համար անբարենպատ ձեւ է։

Միության պատկանադի հաւելույթի վերամշակումը արհեստագործական կոռուպերատիվների կամ՝ տառանձին անայնագործների միջոցով՝ միության վերաբերմամբ չպիսի դիմովի վորպես նրա արտադրական ֆունկցիա։ Միության գործարքներն արհեստագործական կոռուպերատիվների հետ՝ վերամշակման վերաբերմամբ՝ պետք է ձեվակերպվեն պայմանագրերով, վարոնց մեջ պետք և անցկացնել հետեւյալ հիմունքները. միությունը վճարում և արհեստագործական կոռուպերատիվից ընդունելիք արժեքը, ընդ վորում հումուլիթի արժեքը համարվում և այլ ապրանքների գիմաց վորպես կանխույթ (ավանս), և ընդունված կիմաց վորպես կանխույթ (ավանս), և ընդունված պարանքների կալկուլացիան կատարվում և նույն հիմունքներով, ինչպես և արհեստագործական կոռուպերատիվին պատկանող հումուլիթից պատրաստած ապրանքների կալկուլացիան։

V. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ՝ ԳՆԵՐԻ ԻԶԵՑ- ՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԱԼ ՁԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դների իջեցման համար բավական չե միայն խնայության ռեժիմը: Ինչպես արհեստագործական կոռուպտատիվները, նույնպես և նրանց միությունները պետք է վերանային իրենց գործի գրվածքը՝ նրա բոլոր ճյուղերի վերաբերմամբ, ձգտելով վոր ամենից քիչ միջոց ծախսելով ամենամեծ արդյունքն ստանան: Դների իջեցումը պետք է կատարվի ի հաշիվ ապրանքի մի միավորի վրա ընկնող ծախքերի կրծատման, խոկ գրահամար անհրաժեշտ և գործի ռացիոնալացում, վորովհետեւ սպարանքի միավորի վրա ընկնող ծախքերն այնքան են իջնում, վորքան գործի դրվածքը լավանում է: Մասնավորապես ձգտելով «առկախ» ծախքերի հնարավոր կրծատման՝ պետք է դեկավարվել հետեւյալ ընդհանուր հիմունքներով:

Ա. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՔԵՐ

Ապրանքի ընդունելության ծախքերը գործարքի սահանջմած պայմաններից ավելի պետք է կատարվեն միայն այն գետքերում, յեթե այդ ծախքերը կարողանում են ապահովել ապրանքի լավագույն չուկումն ու պետքականությունը:

Չեռք բերվող ապրանքների փաքքացման ծախքերն անհրաժեշտ են այնքան, վորքան ապահովում են

ապրանքը ճանապարհին փչանալուց կամ պակասելուց (կորուստներից):

Ապրանքի պահպանման ծախքերը նաևապարհին պետք է սահմանափակվի իրաս անհրաժեշտությամբ. վոչ մի կերպ չովառի թույլատրվի ապրանքները վագոններում մնալու (կանգուրդի) — որում (կամ քուրդի) գեղքեր:

Բեռնիք բարձելը, վերաբարձելն ու քափելը պետք է կատարվի համապատասխան հսկողությամբ այնպես, վոր հնարավորին չափ պակասի ապրանքների փչացումն ու կորուստը:

Ապրանքների փոխադրության ավելորդ ծախսերից խուսափելու համար անհրաժեշտ է ընտրել նրանց համար ամենաձեռնուու մարզը: Բացի այլ, յերկաթուղային բեռնագրերի մեջ պետք է ճշգրիտ կերպով նշանակել ապրանքի տեսակն ու անունը, համաձայն յերկաթուղային նոմենկատութայի, այլապես յերկաթուղային գանձում և փոխադրության վարձը ավելի բարձր տարեֆներով, յեթե ապրանքների անունները ճիշտ չեն նշանակված:

Ապրանքների փոխադրությունը «մեծ արագությամբ» (օ օլ յա յ ս կօ ր օ ս տ) պետք է խըստարեն սահմանափակել, քանի վոր «մեծ արագության» փոխադրավարձի տարիքները մի քանի անգամ թանկ են «փոքր արագության» տարիքներից: Հնարափորության չափ պետք է դիմել ապրանքներն ամբողջ վագոններով փոխադրելու կարգին, քանի վոր այն չափ եժան և ապրանքները քաշով կամ փոքր քանակությամբ փոխադրելուց: Բացի այդ, ավելի ձեռնուույլ ուղարկել ջրային փոխադրությամբ, վոր փոխադրությամբ փոխադրելուց:

իյան այլ ձեվերից (յերկաթուղի, սայլ ավտո) ավելի
ձեռնտու յի:

Միությունը նյութեր ստանալիս պետք է այսպես
անի, փոր նրանք բաշխվեն արհեստագործական կոհ-
տերատիվներին կամ արակեներին կայաբանից՝ տունց
միության պահեստը մանելու: Ավելի լավ կլինի հա-
րավորություններ ստեղծել, փոր գերջիններս նյութե-
րը հայթայինդ կազմակերպություններից անմիջակա-
նորմն ստանան:

Յեթե փոխադրությունը կատարվում է, սայլերով,
փուրգոններով և այլն, պետք է նրանց վարձել ամբաղջ
ուեցոններով կամ տարավ, քանի փոր յուրաքանչյուր ան-
դամ նրանց վարձելը չտա թանգ և նոտում: Հարեան հե-
ղեղներին պետք է խուսափել փոխադրության այս ձե-
մերից, փորովհետեւ այլ ևս թանգ և նոտում:

Փոխադրության կորուսաներն անհրաժեշտ են սոհ-
մանափակել դոյրություն ունեցող նորմաներով: Այդ
նորմաների գերազանցման դեպքերում վնասները պետք
է դանձել մեղադուրներից: Հենց զրա համար բոլոր այն
գերքերում, յերբ ապրանքը յերկաթուղու կայարա-
նում կամ նախանդակառում բնդունելիս նկատվում են
փաթթոցի վնասվածություն (արկաների կարպածք,
քսակների պատուփածք և այլն), անհրաժեշտ են փոխա-
դրություն կատարող կազմակերպության ներկայա-
ցուցչի մասնակցությունը ստուգել բնդունկող տաղանքի
քաշը (կամ քանակը) և պահսորդի մասին կազմել հա-
մապատասխան արձանագրություն՝ հետագայում փր-
նասները զանձելու նորառակոյի, յեթե վնասների պատ-
ճառը յերկաթուղին (կամ ծովային արանապորտն) է:
Այն դեպքերում, յերբ վնասներն առաջացել են վոչ թե
գերջիններիս, այլ ապրանք հայթայինդի կամ փոխա-

դրության պատասխանատու անձի կողմից՝ վնասների
պետք և ստացվեն վերջիններից:

Բ. Ա.ՇԽԱԾԹՎԱՐ

Տնայնադրութիւն աշխատավարձը չպետք է ցածրաց-
վի, յեթե նրա հաստատված դրությունները չափից դուրս
ըմբռը չեն յեղեւ: Սակայն, արտադրվող ապրանքի մի
միավորի վրա ընկնող աշխատավարձը պետք է հնարա-
վորին չափ իջեցվի բոլոր այն յեղանակներով, վորոնք
բարձրացնում են աշխատավարձի արտադրողականությու-
նը՝ մեծացնելով աշխատանքի յուրաքանչյուր տուան-
ձին բնագավառի արտադրանքը: Այդ նպատակով պետք
է կատարել աշխատանքի գիտական կազմակերպում՝
բնդհանուր հիմունքներով:

Բանգորական ուժը պետք է կազմակերպված լինի
հնարավորին չափ նպատակահարմար՝ աշխատանքի
բաշխման ամենաբարձր կիրամամբ: Այս դեպքում
պետք է ապրանքի արտադրության մի մասում աշխա-
տողների թիվը համապատասխանի նույն ապրանքի
մյուս մասներն արտադրողների թիվն, վորպեսի չափա-
նակ աշխատաղների, մի մասի ակամա պրոցուէ, վոր
կոռպերատիվի կողմից պետք է վճարվի: Նույնպես
չպետք է այնպիսի դրություն ստեղծվի, փոր արտա-
դրությունը /կանգ առնի՛ հումուզիթի կամ այլ նյութերի
վոչ ժամանակին ստացվելու կամ թե մեքենաների ու-
ղործիքների կոտրված կամ անկարգ դրության հետե-
ղանքով:

Հնարավորին չափ պետք է կիրառվի աշխատավար-
ձի գործարքային վճարի ձևը, փոր ամենից չափ և ա-
պահովում աշխատանքի արտադրողականությունը Այս
գեպքում պետք է հետեւ աշխատանքի վորակին և յեր-
շապքում պետք է հետեւ աշխատանքի վորակին և յեր-

բեք թույլ չտալ վորակի վատացում : Գործարքային վլ-
ձարի կերառման անհնարինության դեպքում պետք է
ամսական (շարաթական կամ որսական) աշխատավարձի
դեպքում դիմել «դասի սիստեմի», այսինքն՝ տալ «որ-
վա արտադրանքի դաս», պայման դնելով, վոր այլք որ-
վա արտադրանքի քանակի գերազանցման դեպքում աշ-
խատող լրացուցիչ վարձ ե ստանում պիեմիայի ձեռվ :

«Դասի սիստեմը» կարելի յե կերառել նաև աշխա-
տողների խմբերի (բրիգադների) վերաբերմամբ, նույն
հմունքներով : Այս ձեռվի աշխատանքը դրդում է ընդ-
հանուր աշխատանքին մասնակցողներին հետեւ վոչ
միայն իրենց, այլև ընկերների աշխատանքին : Խմբա-
կան այս կարգի աշխատանքի ժամանակ պետք է հսկել,
վոր խմբերի դեկավարները չշահագործեն իրենց ընկեր-
ներին աշխատանքը բաշխելիս և ստացած աշխատավար-
ձը իմբի մասնակցողների մեջ բաժանելիս : Այդ հսկո-
ղության ձեերից մեկն ել խմբի մասնակցողներից յու-
րաքանչյուրի համար անձնական հաշիվ բաց անելն ու
հատուկ տեղեկագրերով նրանց հետ հաշիվ տեսնելն
(հաշվի նստել) ե :

Աշխատավարձի գործարքային ձեւ բոլոր դեպքե-
րում կերառել չի կարելի և մի քանի պայմաններում
յն նույն խակ չի ապահովում նյութերի անհրաժեշտ
ուժագործումը, քանի վոր գործարքային վճար ստա-
ցող բանվորը չառ ողուտ ստանալու նպատակով դրդա-
պատճառ չունի նյութերը խայլողությամբ գործադրել:
Յեթե, որինակ, կոչկտկարին ձեած պատրաստի նյու-
թերը տալուց, կոչիկ կարելու աշխատանքի վարձա-
տրության ամենալավ ձեւ գործարքային վճարն ե, ա-
պա, որինակ, անտառամասից ոգտավելու կամ վորոշ մե-
ռության դերանների պատրաստման աշխատանքների

չործարքային վճարով վարձատրությունը նպատակա-
նարմար չե, վորովհետեւ այդ ձեւի աշխատավարձը չի
ապհովում անտառամասի փայտեղենի մաքսիմալ ող-
տագործումը :

Ընդհանուր առմումը, արհեստանոցներում և աշ-
խատողների առանձին տեղերում (գաղթյահ, սեղան և
խառնագործակես տեսք և պահպանել լինակատար
այլն) մասնագործակես տեսք և պահպանել լինակատար
կարգ ու մաքրաբյուն : Ամեն մի աշխատողի անհրա-
ժեշտ զործիքներու ու սարքավորումը ձեռքի տակ և վո-
րոշ կարգով դասավորված պետք ե լինեն, վոր աշխա-
տող կարգով դասավորված պետք է համար ուժ և
առանձինակ ավելորդ շարժումների համար ուժ և
ամանակ չգործադրվի : Տվյալ աշխատանքի համար
աշխատողներին ամենապետքական դործիքները պետք է
արագությունը :

Վարչությունը մշտակես հող պիտի տանի աշխա-
տանքի մասնակիցների տեխնիքական գիտելիքներն ու
ունակությունը բարձրացնելու մասին . քանի վրախական
ուժի վրակի բարձրացումը աշխատանքի արտադրուղա-
կանության բարձրացման և ապրանքների արտադրու-
կան արժեքի իջևման լավագույն ճանապարհն ե :

Զպետք և ինույլատրվեն պարապուրդներ (պրոդու-
ներ) :

Ընդհանուր արհեստանոցներում բանվորական ժա-
մանակի հաշվառման գործը պետք է լավ հիմքերի վրա
գործի :*)

*) Շատ բանվորներ ունեցող ձեռնարկության մեջ
հաշվառման լավագույն ձեւ հետեւլալն ե . ընդհանուր
հաշվառման լավագույն ձեւ հետեւլալն ե . ընդհանուր
արհեստանոցներ փակվող արկղ կամ, վորի մեջ դրված և
հաշվառման տախտակ և վրան համարներով կախ են
հաշվառման ուղարկության ժամանակուն աշխատող
ուղած թիթելայի ժետաններ : Յուրաքանչյուր աշխատող
արհեստանոց մասնելիս, տախտակի վրայից իր համարը

Գ. ԾԱԽԹԵՐ ՀՈՒՄՈՒՅԹԻ ՑԵՎ, ՇԺԱՆԴԱԿ
ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ

Անհրաժեշտ է նյութերի մասին վրա խիստ խվրդագուցն և ճշգրիտ հաշվառում սահմանել: Անհրաժեշտ է փորձնական յեղանակով մշտկել արտադրության նորմաներ և արտադրության փաստական արգյունքներն արդ նորմաների հիման վրա կոնտրոլի յենթարկել: Նորմաներից ազելի արտադրություն տալը պետք է խրախուսվի պրեմիաներ տալու միջոցով:

Անհրաժեշտ է պահեստաներում յեղած հումույթի և այլ նյութերի կորուսոր գործան հնարավոր և պականեցնել: Անհրաժեշտ է պահեստից հումույթ և հյուրեր բաց թողնելու գործը կանոնավոր հիմքերի վրա դնել՝ յերեք թույլ չտալով, գոր պահեստապետը և արհետանոցի վարիչը միենաւյն տհձը լինի:

Հումույթն ու նյութերը պետք է մոխվեն խնայողաբար, վորապեսվի նըանց վրա կատարված ծախքերը կրծատվեն և ստացված կտորտանքի ու ավելցուկի (ուղարի) քանակը պակսի, բնդ վորում այնպիսի հումույթ ու նյութեր պետք է ձեռք բերվեն, վորոնք իրենց վորակով արտադրության պահանջներին ազելի յեն համպատասխանում, վերամշակման հետքանքով ալելի մեծ չափով պատրաստի ապրանք ևն տալիս և մինիմում՝ (ամենաքիչ) լրակ (խոտան):

Վերցնում տալիս և ցեխի վարիչին, վորից հետ և առնում աշխատանքի վերջին՝ դարձյալ տախտակի վրա կախելու համար:

Տախտակը ծածկվում է ձիչու այն ժամին, վոր նըանակված և աշխատանքի սկսելու համար: Ռւշացողների անունները դրվում են հատուկ ցուցակի մեջ (տա-

հումույթի ու ոժանդակ նյութերի կանոնավոր մսիման ու ավելի ձեռնարկ ոգտագործման վրա հրամագություն կազմակերպելիս, հատուկ ուշադրություն պիտի գտրնել մանավանդ աշխատանքի գործարքային վարչի գերազանց արագ կտառագարման վեցը, յերբ աշխատանքն արագող էն հումույթին բերու նպատակով աշխատանքները կարող են հումույթին ու նյութերն ավելի չափ վէացնել և անողությ մսինել:

